№ 4 (115) XI ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1901

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

## ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### I

Բէգէրխանի որդի Աբտիւլրահման-բէյի կոչը քրդերին, որ տպագրում ենք „Դրօշակի" ներկայ համարում, թելադրում է մեզ մի քանի խորհրդածութիւններ հայ-քրդական յարաբերութիւնների մասին։

Քիւրդ-հայկական համերաշխութեան հարցը նոր երևոյթ չէ մեր կեանքում։ Ներսէս Վարժապետեանի, Մկրտիչ Խրիմեանի հայրացքները և նրանց որոշ գործնական քայլերը այդ սահմաններում յայտնի են շատերին։ Բաֆֆիի մշտական քարոզները, Սրւանձտեանի կարծիքները և դրա հետ շատ ուրիշների երբեմն մոլեռանդ հաւատը, երբեմն բաւականաչափ հիմնաւորուած համոզումները՝ վաղուց են շրջում մեր հասարակութեան մէջ։ Վերջապէս անցեալ տասնամեակում քրդերի հետ դաշնակցելու նպատակով հայ յեղափոխականների տեղ-տեղ արած փորձերը՝ նոյնպէս արդէն դուրս են գաղտնիքի շրջանից։

Մենք ոչ միայն տրամադիր չենք ժխտելու անցեալից արդէն մեզ ժառանգուած այդ ուղղութիւնը, այլև պատրաստ ենք այսօր ընդունելու — եթէ կամենում էք — այդ ուղղութեան յաղթանակի մի նոր արտայայտութիւն։ Այն ինչ մինչև այժմ քրդերի հետ համերաշխութիւն հաստատելու միտքը յղացուել և հետաքրքրութեան առարկայ է եղել միայն հայերի մէջ, վերջին տարիներում տեղի ունեցած մի քանի փաստեր—օրինակ, 1898 թւի „Դրօշակի" № 6-ում ու 1900 թ. № 1-ում տպած յօդուածները, ինչպէս նաև Աբտիւլրահման-բէյի ներկայ կոչը—ցոյց են տալիս, որ նոյն միտքը հող է գտել և արդէն կեանքի վերածուելու ճիգեր է անում նաև քիւրդ ինտէլիգէնտների մէջ։ Միևնոյն գաղափարի վրայ աշխատողներ ուրեմն երևան են գալիս երկու կողմից՝ փոխանակ մի կողմի, և ինքըստինքեան հաւանական է դառնում այն ենթադրութիւնը, որ այսուհետև հայ քրդական համերաշխութեան խնդիրը կարող է զարգանալ համեմատաբար աւելի նպաստաւոր, աւելի յաջող պայմաններում։

Սակայն՝ չնայելով երևոյթի բոլոր ուրախալի բնաւորութեան, մենք չենք կարող ծածկել մեզանից, որ քրդա-հայկական դաշնակցութեան խնդիրը ամէն անգամ, երբ նա հրապարակ է գալիս, մեզ դնում է մի դրութեան մէջ, որ ֆրանսիական ժողովուրդը բնորոշում է իր մի առածով, այն է՝ «parler de la corde dans la maison d'un pendu» (խօսել պարանի մասին մի կախուածի տան մէջ)։

Եւ իսկապէս. եթէ հարցնելու լինենք մեզ՝ թէ ո՞ւմից է հայ ժողովուրդը — գոնէ XIX դարի քսանական թուականներից—օրէօր, ամսէ ամիս, տարէց տարի աւելի տուժել, այնչափ տուժել, որչափ նա չէ տուժել անմիջապէս ոչ մի ուրիշ ազգութիւնից, դժուար թէ գտնուի մէկը, որ չպատասխանէր՝ քրդից։ Եւ ահա այդ մշտական մեր թշնամու, մշտական մեր աւերողի, մորթողի, անպատուողի, տանջողի, մեր հայրենիքից մեզ ցիրուցան անողի, մեր արիւնը ծծողի, մի խօսքով հայութիւնը կախ տուող այդ պարանի մասին է, որ մենք հայերս պէտք է խօսենք-լսենք։ Դրութիւնը աւելի քան անողորմ է, և իհարկէ պահանջում է ամենայն զգուշութիւն խնդիրը ըստ կարելւոյն սառնասրտութեամբ լուսաբանելու համար։

Միանգամայն անհրաժեշտ է պարզել, որո՞նք են այն պայմանները, այն պատճառները, որ հիմնաւորում են քիւրդ-հայկական հակառակութիւնները, և կարելի՞ է արդեօք դրանց առաջն առնել և ի՞նչ միջոցներով։

---

Ապրելով լեռներում և սարահարթերում, ուր երկրի բնական հարստութիւնները և կիսաթափառական-խաշնարած կենցաղն յատուկ սահմանափակ արդիւնաբերութիւնը չեն պայմանաւորում քրդերի համար ապահով կեանք, նրանք ներկայանում են գոյութեան կռուում իբրև թոյլ տարր։ Կաթ, պանիր, միս, բուրդ, բրդի գործուածքներ և քիչ քանակութեամբ հաց, — ահա այն մթերքները, որ արդիւնաբերում են քրդերը։ Արհեստի բազմազան արտադրութիւններ, բրինձ, աղ, շատ յաճախ հաց, մրգեր ևն—այսինքն մի շարք առաջնակարգ կենսական պիտոյքներ նրանք պէտք է ստանան դրսից, ուրիշ ժողովուրդներից, և դրա համար նրանք չունեն ուրիշ միջոց քան կողոպուտ և սպանութիւններ, որոնք տարիների ընթացքում դարձել են „քրդական արդիւնաբերութեան" մի անհրաժեշտ, համարեա մի „բնական" մաս։ Իր զարգացման շաւղում քիւրդը հազիւ է բարձրացել մինչև նահապետական ցեղական սկզբունքը։ Ցեղի շահը—ահա ինչն է ղեկավարում նրա կեանքը։ Զրկայ այդտեղ ազգային գաղափար, ժողովրդական մի ամբողջութեան հասկացողութիւն։ Զրկան այդտեղ վերացական ընդհանուր սկզբունքներ ոչ սպանութիւնների, ոչ յափշտակութիւնների մասին թէ հասարակական և

թէ մասնաւոր կեանքում, ճիշդ այնպէս, ինչպէս քաղաքակրթ ազգերի մէջ պետական ինքնապաշտպանութեան տեսակէտից ընդունւում են պատերազմի սպանութիւններ, յափշտակութիւններ ևն։ Այն ամէնը, ինչ պահպանում է ցեղը, յաճախ նոյնիսկ անհատը — լաւ է, և ինչ կարող է վնասել նրանց՝ վատ։ „Ցեղակից“ և „այլացեղ“ համանիշ են „բարեկամ“ և „թշնամի“ խօսքերին, թէկուզ այլացեղը լինէր նոյն քրդական ազգութիւնից։ Ու հասկանալի է, որ յանցանք չկայ, որ քիւրդը չարդարացներ, եթէ դա կատարւում է այլացեղի վրայ։ Այդ բաւական չէ։ Կողոպուտ և սպանութիւնները, իբրև ցեղի և անհատի բարեկեցութեան նպաստաւոր միջոցներ, նոյնիսկ առաքինութիւն են համարւում և գովասանւում, փառաբանւում, երգւում են իբրև կտրիճի վայել յատկութիւններ։

„Ո՛չ բալուջները, ո՛չ բեգուինները, ոչ հապէշները և ո՛չ էլ պատագոնները չեն գերազանցում քիւրդ պատերազմասէր ցեղերին իրենց աւազակաբարոյութեամբ և այդ բնազդման բաւականութիւն տալու արուեստով“, — ասում է Էլիզէ Ռեկլիւն։

Այդպիսով քաղաքակրթութեան պատմութեան մէջ ինչ տեսակի բաժանումների էլ հետևելու լինենք — ընդունենք Տայլորի, Մորգանի թէ Լիպերտի սիստէմները՝ այդ միևնոյն է — քրդերը, իբրև մեծ մասամբ դեռ թափառական-խաշնարած և ցեղական սկզբունքով ապրող ժողովուրդ, պէտք է դասաւորուեն մարդկային քաղաքակրթութեան յայտնի շրջաններից՝ բարբարոսական շրջանում։ Բարբարոսական կենցաղի մի ժողովրդի հետ է ուրեմն, որ պէտք է ապրեն հայերը, նրանց անմիջական հարևանները, որոնք սակայն վաղուց են ոտ կոխել քաղաքակրթական կենցաղի շրջանը։ Այս անբախտ զուգադիպութիւնը մի երկրում երկու տարբեր քաղաքակրթական կենցաղների — ահա մէկը այն հիմնական պատճառներից, որոնք պայմանաւորում են քրդական ու հայկական շահերի և տեսակէտների ահագին տարբերութիւնը։

—

Միւս նշանաւոր պայմանը, որի շնորհիւ անօրինակ կերպով սրւում են քիւրդ-հայկական յարաբերութիւնները և որի ահռելի ապացոյցը մենք տեսանք մեր օրերում, — դա այն տաքտիքն է, որին հետևում է թիւրք կառավարութիւնը հնուց իվեր։

„Որպէս զի քրդերը հեռու մնան անկախութեան ձգտումից, կառավարութիւնը աշխատում է նրանց զբաղեցնել ուրիշ խնդիրներով։ Այդպէս, օրինակ, նա դրդում է քրդերին Քիւրդիստանում ապրող նեստորականների դէմ, ինչպէս նաև մահմէդականներին զինում է քաղդէացիների դէմ, իսկ վերջիններիս՝ եզիդիների և քրդերի դէմ։ Նա այդպիսով առաջ է բերում խռովութիւններ այն միակ նպատակով, որ իրեն պահի գերագոյն իշխանութիւնը... և հպատակ աղանդները չմիանան ընդհանուր թշնամու դէմ“։

Այս դիտողութիւնները մենք գտնում ենք գերմանացի Հվայդեր-Լէրխէնֆելդի մի աշխատութեան մէջ, որ հրատարակւած է 1875 թւին այն հետաքրքրութիւնների հիման վրայ, որ 1872-1873 թւականներին ինժեներ Զերնիկի ղեկավարութեամբ արւել են բուն Քիւրդիստանում (Հիւսիսային Միջագետք)։ Ում յայտնի են քրդերի ձեռքով կատարւած եղիդիների ջարդը 1830 թւին կամ 1846 և 1849 թւականներին Մուհամէդ-փաշայի (Կիրիտլի) դրդմամբ նեստորականների կոտորածը, ինչպէս նաև 1860 թւին առհասարակ քրիստոնեաների ջարդը, երբ — ըստ միևնոյն հեղինակի — „թիւրքերը գործում էին դրուզների հետ միասին, գրգռելով նրանց ֆանատիկոսութիւնը և արտայայտելով վերին աստիճանի նենգամտութիւն ու կեղծաւորութիւն“, — ում յայտնի են, ասում ենք, այս փաստերը, նրանց մէջ տարակոյս չէ կարող լինել ինժեներ Զերնիկի իրաւացի դիտողութիւնների մասին։ Յատկապէս հայերիս վերաբերմամբ՝ տաճկական նոյն տաքտիքը, ի՛հարկէ, արտայայտւեց աւելի սոսկալի չափերով։ Բոլորիս յայտնի են այն ներգործական խրախուսանքները քրդական բոլոր խժդժութիւններին, որոնք ուղղւած են եղել հայերի դէմ։ Պատկերը լրացնելու համար միայն յիշատակենք 1829, 1855 և 1877 թւերի հայկական մեծ աւերումները քրդերի ձեռքով և վերջապէս „Համիդէի“ կազմակերպութիւնը, որի կոչումը այնքան աղետաբեր կերպով արտայայտւեց 1895 և 1896 թւերին։

Միևնոյն „վերին աստիճանի նենգամտութեան և կեղծիքի“ սէստէմին են հետևում և պիտի հետևեն նաև ռուսները, լուսաբանելով հայկական շարժումը ճիշդ և ճիշդ թիւրքերի պէս, այսինքն իբրև մի ձգտում, որ նպատակ ունի եւրոպական պետութիւնների միջնորդութեամբ ստեղծել սեփական հայկական թագաւորութիւն և քրդերին ենթարկել ստրկական վիճակի։ Այդպէս, օրինակ, ռուս սպակոյտի գնդապետ Կարցովը, որի ատելութիւնը դէպի հայկական խնդիրը հասնում է կուրութեան նոյնիսկ ակներև փաստերի առաջ, Կովկասի կայսերական աշխարհագրական ընկերութեանը տւած իր զեկուցման մէջ ասում է.

„Զտար, մեծ մասամբ անգլիական դրդումների (?) ազդեցութեան տակ, վերջին տարիներում քաղաքների հայերի և հոգևորականութեան մէջ սկսել է շարժում հայկական անկախութեան վերանորոգման և վաղուց չքացած Հայաստանի վերածնութեան համար... Հասկանալի է ատելութեան այն զգացմունքը, որ ծագեց քրդերի մէջ դէպի հայերը. այն միտքը, թէ նրանք, որ կազմում են երկրի (?) ազգաբնակութեան մեծամասնութիւնը, կը լինեն ենթարկւած (?) խորապէս արհամարող և ոչ-պատերազմասէր փոքրամասնութեան (?), բոլորովին անտանելի է ամէն մի մահմէդականի, մանաւանդ քրդի համար“։

Բայց հայկական խնդիրը էր արմատում խեղդելու կողմնակից գնդապետը քրդասիրութիւնից չէ, որ խօսում

է հայերի դէմ։ Ահա բառ առ բառ նրա խօսքերը քրդերի մասին, որոնց վրայ նա նայում է լոկ միմիայն ռուսական տիրապետական դիտումների տեսակէտից, ինչպէս տաճիկները՝ տաճկական գերիշխանութեան տեսակէտից։

„Քիւրդերի պատմութեան տեսութիւնից կարելի է հանել մի եզրակացութիւն, որ շատ կարևոր է գնահատելու համար այս կամ այն կարելի գործողութիւնները Քիւրդիստանին մօտիկ երկիրներում ծագած քաղաքական բարդութիւնների ժամանակ։ Քրդին շատ քիչ է ծանօթ հայրենասիրութեան զգացմունքը այն մտքով, ինչ մտքով, հասկանում ենք մենք. հաւատարմութիւն տաճիկ կառավարութեան ամենևին չունեն, բայց բաւական զօրեղ է զգացմունքը դէպի ցեղը և նրա գլխաւորը“։

Եւ էլի.

„Քրդերը շուտափոյթ զէնքի դիմելով՝ նոյն արագութեամբ էլ սառչում են, հէնց որ դիմադրութեան են հանդիպում։ Կողոպուտի հոգսը նրանց մէջ գերազանցում է նոյնիսկ հաւատարմութիւնից դէպի շէյխը։ Ջալալի քրդերը հետևում են շեյխ Թէյմուր-աղային ընդդէմ իրենց ցեղակցի, որը բացի դրանից՝ շրջապատուած է կրօնական հմայքով։ Մի խօսքով՝ քրդերի բոլոր գործողութիւններում երևում է ոչ թէ դիմացկուն և համաձակ մի ժողովուրդ, այլ վայրենի կողոպտիչներ, որոնք անընդունակ են ոևէ երկարատև ջանքերի և պատրաստ են ամէն բան զոհել վայրկենական, գրոշային շահին“։

Եւ իհարկէ այդ „վայրկենական, գրոշային շահին“ բաւարարութիւն տալու համար էր որ 1829 թուին ռուս-տաճկական պատերազմի ժամանակ կոմս Պասկեվիչը, հմարելով Քիւրդիստանի խաղաղութիւնը պատերազմի յաջողութեան գլխաւոր պայմաններից մէկը, թոյլտուութիւն ստացաւ 100 հազար ոսկի ծախսելու քրդերին ընծաներ բաժանելու նպատակով։

—

Վերջապէս չէ կարելի անտես առնել մեզ հետաքրքրող հարցում նաև կրօնի նշանակութիւնը։

Շատերն են ժխտում կրօնի դերը քիւրդ-հայկական յարաբերութիւններում։ բայց մեզ թւում է, որ մի կրօն, որի մէջ դարերի ընթացքում ամփոփուել է մահմէդական աշխարհի համարեա բոլոր մտաւոր-բարոյական կեանքը. մի կրօն, որը գերագոյն ղեկավար է հանդիսացել մահմէդական պետութիւնների ամբողջ քաղաքական կազմի մէջ. մի կրօն, որ „գեաւուր“ խօսքով այնքան խստօրէն բաժանում է ամբողջ երկրագնդի այլակրօն տարրերը „միւսիւլմաններից“. մի կրօն, որ Մարգարէի անունով կոչում է իր հօտին—„պատերազմեցէ՛ք անհաւատների հետ մինչև կը վերանայ ամենայն մի դիմադրութիւն, մինչև Ալլահի հաւատը կը դառնայ միակ կրօն աշխարհիս վրայ“. մի կրօն, որ „հալալ“ է անում իր հետևողներին այլակրօնների արիւնը և աւար-կողոպուտը. մի կրօն, որի պատգամները այնքան համապատասխանում են մանաւանդ քրդերի բոլոր վայրենի բնազդներին,—մեզ թւում է, ասում ենք, որ այդպիսի մի կրօն չէ կարող չունենալ իր որոշ դերը քիւրդ-հայկական հարաբերութիւնների խնդրում։ Այդպէս են նայում հարցին նաև Տաճկաստանը ու իսլամը մօտից ուսումնասիրած բոլոր հեղինակները, սկսած մեր անմահ Բաֆֆիից մինչև Էնգելհարդ (Տաճկաստան և Թանզիմաթ), Գրին (Հայկական ճգնաժամը) ու շատ ուրիշներ։

Ահա, մեր կարծիքով, այն գլխաւոր գործոնները — քրդերի բարբարոսական կենցաղը, տաճիկ ու ռուս կառավարութիւնների տաքտիքը և մահմէդական կրօնը — որոնք սաստկապէս դժուարացնում են և պիտի դեռ ևս դժուարացնեն քիւրդ-հայկական համերաշխութեան գործը։

Հետևեալ յօդուածում կը քննենք երկրորդ հետաքրքիր հարցը, որ մենք դրինք վերև։

## ԿՈՉ ՔԻՒՐԴԵՐԻՆ

Ներկայ կոչից՝ տպագրած քրդերէն և թիւրքերէն լեզուներով, 500 օրինակ ուղարկուած է „Դրօշակի“ խմբագրութեան սրանից դեռ չորս ամիս առաջ։ Այդ կոչը, որ մեզ հաճելի է համարել արձագանք նորաբողբոջ քիւրդ շարժման, մենք յարմար դատեցինք հրատարակել „Դրօշակում“ միայն այժմ, երբ բոլոր օրինակները արդէն ուղարկուած են Թրքահայաստան քրդերի մէջ տարածելու համար։

Քիւրդե՛ր.

Ինչպէս որ մարդս ստիպուած է միջոցներ պատրաստել իր անձնական պատուովը իր գոյութիւնը պահպանելու համար, այնպէս ալ՝ քանի որ միմինակ անկարելի ըլլալով ապրիլ, բնականէն հարկադրուած է ընկերականօրէն ապրիլ, նա պէտք չէ ինայէ իրեն պատկանած հասարակութեան համար աշխատիլ, պաշտպանել անոր համբաւն ու պատիւը, որ կեանքէն աւելի սուրբ է, ապահովել ընտանիքի անդամներուն ապագան և իր հայրենի սիրած հողը պաշտպանել թշնամիներուն դէմ։

Ասոր համար ամէն ժողովուրդ իր ազգային պաշտպանութեան տեսակէտին համեմատ շարժելու է։ Դուք, շատոնց է, ձեզ քաղաքակրթութեան ամէն տեսակ յառաջադիմութիւններէն, գիտութեան բարիքներէն, ազատութեան երջանկութենէն զրկող և նենգօրէն գործադրած չարագործութիւններով վերջապէս աշխարհի առջև ձեր համբաւն ու պատիւը արատաւորող Աբդիւլ Համիդին և անոր բռնաւոր պաշտօնեաներուն աշխատիլ ծառայելնէդ զատ՝ ուրիշ բան չէք ըներ։ Փատիշահին հեռաւոր նպատակը ձեզ ձեր տգիտութեան մէջ պահել է. ատոր համար, ձեր այդ վիճակէն օգուտ քաղելով, այնքան չարիքներու փոխարէն՝ շուներուն իսկ չընդու-

նած մէկ-երկու պատուոնշանով ձեզ կը փայփայէ։ Դուք չէք հասկնար որ այդ նշանները և պատւանշանները ձեր ազգային արժանապատւութեան և ձեր ապագայի կորուստին գինն է։

Քիւրդեր. Արևելքի ցեղերուն մէջ էն կտրիճը, էն խելացին և էն ժրաջանն էք. ան հողի պաշտպանութեան համար, որուն վրայ ձեր երիտասարդութիւնը անցուցած էք, ժամանակէ մը ի վեր ի՞նչ ծառայութիւն մատուցիք։

Ձեզ բնաջինջ ընել ուզող փադիշահին ճամբուն այնքա՜ն հոգիներ զոհ տուիք,—ի՞նչ ըրիք Քիւրդիստանի պաշտպանութեան համար։ Ձեր երկիրը կարգ մը աւազակ պաշտօնեաներու կերուճարակ ձգելով և անձամբ անոնց ստրուկ ծառայութիւններ ընելէ զատ՝ ի՞նչ ըրած էք։

Ան Թագաւորը, որուն խալիֆայ է ըսելով հնազանդիլ ուզեցիք, այնքան տգէտ էք, որ չէք իմացած թէ բռնակալ և գահէն վար առնելու արժանի մէկն է։ Փադիշահին խալիֆայ անունին տակ կատարած չար բռնութիւնները Ճինկիզ-խանին ողորմիս հանել կուտան։ Աշխարհք արարած գիտէ այս բաները, դուք միայն դեռ չէք իմացեր։

Ան ինքնիրեն խալիֆա թող ըսէ, ինչ կըսէ ըսէ։ Ձեր մասին ի գործ դրուած բռնութիւններուն ոչխարի պէս հնազանդելու և իւրաքանչիւրը մէյմէկ ահագին փորձանք եղող պաշտօնեաներու կեղեքումներուն ծառայակիր ըլլալու ինչո՞ւ ստիպուած ըլլաք։

Չէ՞ք գիտեր որ բռնակալին հնազանդելը ամբարշտութիւն և Աստուծոյ պատիժը հրաւիրել է։ Այնքան պզտիկ ազգեր, յարատև ջանքերու շնորհիւ, վերջապէս իրենց համար պատուհաս բռնակալի անօրէն դիտումներէն իրենց ընտանիքը ու ազգութիւնը ազատեցին ու երջանիկ եղան։ Դուք՝ փոխանակ այդ տեսակ ազգերէն օրինակ առնելու, իրար կըսպաննէք և այսպիսով ուժերնիդ թուլացնելով, ձեր էն մեծ թշնամի փադիշահի բռնակալութեանը կաշխատիք աւելի ու աւելի ասպարէզ տալ։

Միթէ՞ թոյլ կուտայ ձեր ծանօթ վեհանձնութիւնը ու քաջութիւնը, որ սպաննէք կարգ մը անմեղ հայերու կիները ու երեխաները։ Մեզի կը վայլէ՞ այսքան խաբուիլ փադիշահի մը չարագրգռութիւններէն, որ ձեր արարքներուն համար աշխարհի առջև ձեզ վայրենի կըներկայացնէ։

Կարգ մը անպաշտպան հայեր սպաննելով՝ չէ՞ որ դուք կը քանդէք ձեր հայրենիքը և ձեր տունտեղը։ Ձեզ աւերի ու աւարի մղող վալիներ, միւթէսարիֆներ, գայմագամներ ձեր ձեռք բան ձգեցի՞ն արդեօք, և մանաւանդ ինչ որ ունէիք առնելնէն զատ՝ չէ՞ որ ձեր պատիւն ալ առին։ Աստուծոյ և Մարգարէին արգիլած սպանութիւններէն, թալանումներէն օգուտ քաղելու չափ տգէ՞տ գտնուեցաք։ Քանի մը տարի առաջ փադիշահին հրամանով Վան գումարուած ժողովի մը մէջ հայերը ջարդելու որոշում տրուելով, հանգուցեալ Շէյխ Իպատուլլահը, որ ներկայ էր, վեր կացաւ և ըսաւ. „Աստուծոյ կամքին հակառակ է այսպէս հայերը ջարդել, և այս իրադէն ընող փադիշահը բռնաւոր և անիրաւ ըլլալուն, ոչ միայն անոր հրամանին հնազանդելու չէ, այլև նոյնիսկ արժանի է գահընկէցութեան։ Անոր բուն նպատակը նախ քիւրդերուն ձեռքով հայերը սպաննել և յետոյ բանակին ձեռքով քիւրդերը ջարդել տալ է“։ Աս ըսելով հեռացաւ ժողովէն։ Հանգուցեալ Շէյխին այս մարգարէահաճոյ շարժումը ինչո՞ւ ձեզի գեղեցիկ օրինակ մը չէ եղած։ Դուք, իբրև ցեղակից և միևնոյն երկրի զաւակ, բնականաբար պարտաւոր էք բարեկամաբար ապրիլ հայերուն հետ, և այս բնական անհրաժեշտութեան պատճառով՝ չէ՞ որ այսքան ժամանակէ ի վեր առանց կռւի և անհամաձայնութեան անոնց հետ լաւ յարաբերութեան մէջ կապրիք։ Այսքան բնական և հինաւուրց յարաբերութիւնները Աբդիւլ Համիդի չարագրգռութեամբ ոտնակոխ ընելով, հայերը ջարդելնիդ, այս և հանդերձեալ աշխարհի մէջ մեծ պատասխանատուութեան տակ կը ձգէ ձեզ։ Եթէ դուք անոնք չարչարէք և հարստահարէք, հարկաւ հարստահարուածին վրէժխնդիր Աստուածը ձեզի անպատիժ չի ձգեր։

Քիւրդեր. ալ հերիք է այսքան աղէտ ու ձախորդութեան պատճառ եղող անփութութիւնը և թշւառամտութիւնը։ Ձեր նախահայրերուն պատիւն ու համբաւը նամկրտութեան հողովը ծածկեցիք։ Չի ձանձրացա՞ք դեռ ձեր վրայ իշխող պաշտօնեաներուն ձեռքը յափշտակութեան, մարդասպանութեան և աւազակութեան գործիք ըլլալէ։

Այս ամօթարատէն ի՞նչպէս պիտի մաքրէք ձեր ազգային պատիւը։ Աշխատեցէք ձեր հին ազատութիւնը ձեռք բերելու և ձեր անցեալ երջանկութիւնը ետ դարձնելու։ Երեք տարի է, ձեզ արթնցնելու և ձեզ աշխարհին ճանչցնելու համար, Պոլսէն այդ նպատակով ազատ Եւրոպա անցայ և հոն մեր ազգին ամէն կերպ յառաջադիմութեան համար „Քիւրդիստան“ անուն լրագիր մը հրատարակեցի։ Այն մեծամեծներուն, որոնց հետ կը թղթակցիմ, խօսքերնուն հնազանդեցէք և անոր համեմատ շարժեցէք։ Յարգեցէք և մտիկ ըրէք ձեր իւլէմաները, երևելիները։ Կըսպասեմ որ ժամանակը գայ. ինշալլահ (առաջ Աստուած) մօտիկ ժամանակէն անձամբ կուգամ և ձեզի հետ մէկտեղ կաշխատիմ։ Այս առթիւ հարկ եղած ջանք ու խնամքը գլուխ հանելու համար՝ գլխաւորապէս քիւրդ շէյխերը և մեծամեծները կը հրաւիրեմ. Քիւրդիստանի մէջ յարուցեալ գիշութիւններուն մեծապէս անոնք պատասխանատու են։ Տգէտները, փոքրերը դժբախտ են, անոնց ալ մեղքը մեծերուն, գործի գլուխ կեցողներուն վիզն է։ Իրերու վիճակին ծանրակշռութիւնը հասկնալով՝ անոր շարունակութեան չաշխատիլ մեծ յանցանք է։ Մանաւանդ որ փադիշահին տուած պատւանշաններուն ու աստիճաններուն համար այս չարագործութիւններուն գործիք ըլլալ աններելի ոճիր է։ Ձեր տեսած բռնաւոր հարստահարութիւններուն վերջ մը դնելու համար, հայերը ձեզի ամէն կերպով աջակցելու կազմ պատրաստ են։ Համերաշխութեան ու համաձայնութեան մէջ մի թերանաք։ Այսպիսի վիճակի մէջ Աստուծոյ յաջողութիւնը հետերնիդ է։

1318 Անձնական ՊԷՏԷՐԽԱՆ-ՊԷՅԻ ՈՐԴԻ
Զիլգատէ 11 Կնիք ԱՊՏԻՒԼՐԱՀՄԱՆ

# ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

6 յունիս

Տեղական լրտեսներու փութաջան գործունէութեան ու, ատոր իբր հետևանք, ցոյց տուած քաջագործութիւններու և շահատակութիւններու մասին ոչինչ չենք ուզեր գրել, որովհետև ատոնք այնքա՜ն յայտնի են ամէն մարդու։ Մենք պիտի բաւականանանք մատնանիշ ընելով միայն անոնց ցոյց տուած եռանդը՝ իրենց սիրելի վեհապետ-

բռնակալին դէմ՝ դաւադրող երևակայական վնասակար մարդեր ստեղծելով զանոնք բանտ առաջնորդելու մասին։ Լրտեսներու այս աղնիւ պաշտօնէութեան փոյթը, իրենց տիրոջ անյագ ու վայրագ կիրքերը գոհացնելու համար զոհեր պատրաստելու գործունէութեան մէջ, այնքան սիրելի ու շահաւէտ է իրենց համար, որ չեն վարանիր, նոյնիսկ քիչ թէ շատ կամ առ ահի իրենց բարեկամութիւնը և երբեմն-երբեմն ալ նիւթական նուէրներ մատակարարող անձերը մատնելու ելլելը։ Այս կարգի դէպք մը պատահեցաւ վերջերս, որուն, ցաւ է ըսել, տխուր դերակատարը հայ մըն է, կամ, արդար է ըսել, մէկը՝ որ սխալմամբ հայ ծնած է փոխանակ սուլթանի մէկ հարճը ծնելու։

Նշանաւոր է հայ ոստիկան-լրտես Գրիգորը չէ թէ իր մեծ յատկութիւններուն համար, այլ շնորհիւ իր կնոջ—Օրթագիւղի քահանայի մը աղջիկ—որ պատիւ ունեցած է ոստիկանական նախարար նախկին Շէֆիգ պէյի, այժմ Շէֆիգ փաշայի, տղուն հոմանուհին ըլլալու, ինչ որ արհամարելի առաւելութիւն մը չէ Թիւրքիոյ մէջ։

Այս լրտես Գրիգորը կերպով մը ծանօթութիւն կը հաստատէ ծանօթ գրավաճառ Վահան Զարդարեանին հետ։ Գրիգոր չմոռնար Վահանէն դրամ կորզել պարբերաբար՝ փոխառութեան քօղին տակ։ Կուգայ սակայն ատեն մը, ուր Վահան Զարդարեան ալ չուզեր ոևէ դրամ տալ Գրիգոր կը բարկանայ և վրէժ լուծելու համար՝ օր մը, Վահանի զբաղած մէկ վայրկեանէն օգտուելով, գիրքերէն մէկուն մէջ կը սպրդեցնէ հայ թագաւորներու մէկ քանի լուսանկարներ, որոնցմէ հարիւրներով կը ծախուին Եիւքսէք Գալաթայում հրէայ գրավաճառներուն մօտ։ Քիչ ետքը ոստիկաններ կը ձերբակալեն Վահանը և բանտ կը տանին։ Այս յաջող ձեռքէն յետոյ, Գրիգոր անմիջապէս կը դիմէ Վահանին եղբօրը՝ Պիմէն Զարդարեանին՝ պահանջելով անկէ 5 ոսկի՝ գործը առանց քննութեան ու բարեկամաբար վերջացնելու համար։ Պիմէն կը մերժէ։ Հետևեալ օրը Գրիգոր մէկ երկու ոստիկաններու հետ կերթայ գրատունը խուզարկելու։ Երկար յոգնութիւն չեն կրեր. Գրիգոր անմիջապէս կը ցցնէ ոստիկաններուն գիրք մը՝ ըսելով. „Սա բացէք, նայինք"։ Պատկերները երևան կուգան... ոճիրը հաստատած է։ Գիրքը կը ցցնեն Վահան Զարդարեանին, որ կը հաստատէ իրն ըլլալը, բայց պատկերներ չըճանչնար։

Այս դէպքը պատահած է 1901 յունուար 1-ին։ Մինչև այսօր Վահան կը տանջուի թիւրք բանտերու մէջ՝ ամբաստանուած իբր խռովարար, յեղափոխական, վնասակար անձերու հետ յարաբերութիւն, թղթակցութիւն ունենցող և արգիլուած գրքեր, պատկերներ ծախող։ Դեռ յայտնի չէ՝ թէ ի՞նչ պիտի ըլլայ խեղճ Վահանին վիճակը։ Գործը մինչև եպարքոսութեան ելած է. անկէ ալ թերևս իրատէով մը անոր սև ճակատագիրը վճռուի։

*

Հանրածանօթ է արդէն, որ հոս, Թիւրքիոյ մէջ, սուլթանին շուրջը, նախարարներու և առհասարակ բարձրագոյններէն մինչև ամենայետին պաշտօնեաներուն մէջ, գող, աւազակ, նենգամիտ և երկիր ու հայրենիք կործանողներն են միայն որ յարգի են։ Վերջերս եվրոպական նախարարը փոխուեցաւ։ Բայց գիտէ՞ք՝ թէ ինչ տեսակ մարդ է նախկին կրթական և նորընտիր եվրոպական նախարար Զիւհտի փաշան։ Սուլթանը թերևս պ. Լուպէյի օսմանեան կառավարական վարկի մասին Միւնիր պէյին յայտնած հաւատքը զօրացնել ուզած ըլլայ նախարարութեան կոչելով Զիւհտի փաշան, որ ասկէ ոչ շատ առաջ, թղթադրամներու շրջաբերութեան ատեն, անհանում հարստութիւն է դիզած անհաշիւ թղթադրամներ հրապարակ հանելով և իր գրպանը լեցնելով։ Հաստատապէս կրնանք ըսել, որ այժմէն, երբ Զիւհտի փաշան եվրոպական կառավարութիւնը իր ձեռքն առնէ, հանրային պարտքի օտար վարչութիւնը պիտի յաւիտենականանայ Թիւրքիոյ մէջ։

Պետական գանձին վրայ խօսելու առիթով տեղն է յիշատակել որ զինուորական ծառայութեան շրջանին լրացուցած ծովային կարգ մը զինուորներ իրենց տեղերը դառնալու համար՝ իզուր երկար ատեն իրենց դիզած ամսականներու կարգադրութեան սպասելէ ետքը, մօտ օրերս ալ համբերութիւնին հատած, գիշերով կը յարձակին Թէրսանէի ծովակալութեան պաշտօնատան վրայ և կը պահանջեն ծովակալ փաշան տեսնել։ Իհարկէ դիմադրութիւն կըլլայ, հետևաբար կռիւ. զինուորները զինուած էին։ Աղմուկը կը մեծնայ. Բերայի, Բանկալթիի զօրանոցներէն մեծ քանակութեամբ զօրք կը թափի նաւարանը և մեծ դժուարութեամբ կը յաջողին մարել կռիւը։ Այս սովալլուկ և կատղած զինուորներու դիզուած ամսականներուն իրը վճար՝ անոնց կը տրուին հէվալէներ իրենց հայրենակից գիւղերուն վրայ (իհարկէ, հայ գիւղերու)։ Ալ կարելի է դիւրութեամբ երևակայել թէ ինչ կըլլայ այն գիւղերու վիճակը, ուր այս կատղած ու անօթի գազանները պիտի երթան իրենց առնելիքները պահանջել...

*

Հայերը իբր թէ սկսած են ազատ ճամբորդել ուզած տեղերին, սակայն փաստերը ուրիշ տեսակ կը խօսին։

Վերջերս Տիրան Պասմաճեան անուն եազմայի երկրորդական վաճառական մը, պահանջի մը գանձման համար, Իզմիր կուղևորուի. գործը լմնցուցած դառնալու համար հազիւ թէ շոգենաւ մտնելու կըլլայ, երբ ոստիկանները զինքը կը կեցնեն և բանտ կուղեն տանիլ։ Հոն կամբաստանեն ալ չգիտցուիր ինչ բանով, միայն թէ անմիջապէս ազատ թողելու համար զինքը՝ 20 ոսկի կը պահանջեն։ Շատ դժուարութեամբ միայն 3 ոսկիով թող կուտան որ տեղը դառնայ։

Պոլիս եկող գաւառացի վաճառականներ կան՝ գնումներ ընելու համար. դեռ գործերնին չլմնցուցած, նայիս, ոստիկաններ կուգան իրենց սենեակը և կ'ազդարարեն որ իրենց պայմանաժամը լրացած ըլլալով յաջորդ օրն իսկ մեկնելու են։ Բայց վաճառականը ճարահատ, չ'ուզելով գործը կիսկատար ձգել, 10-20, 25-30 մինչև 50 ոսկի կուտայ, գործին համեմատ, ու կը մնայ։ Այս կարգի սակարկութիւնները այլևս բացէ իրաց տեղի կ'ունենան։

Կան գաւառացիներ, որոնք՝ հոս կարգին գործ ունենալով, ժամանակի մը համար հայրենիք գացած են իրենց սիրելիներու քով։ Երբ կուզեն վերադառնալ իրենց գործին, հրաման չկայ։ Տեղին միտիրը հրաման կուտայ, միթէսարիֆը թոյլ կ'ուտայ, վալին կ'ընդդիմանայ. վալիէն արտօնութիւն կ'առնի, և ահա ծովեզերքներէն ետ կը դարձնեն։ Այս գործողութիւնները փոխարէնով կըլլան, և խեղճ գաւառացիներուն պարտքով, ծանր տոկոսներով փոխ առած դրամները կերթան լեցնելու պաշտօնեաներու ծակ գրպանները։

Ցաւալի, յոյժ ցաւալի է ըսել, որ այս կարգի գործերու մէջ, ինչպէս նաև բանտարկեալներուն վերաբերեալ խնդիրներու մէջ, Թիւրք պաշտօնեաներու անխղճութեան ու կաշառակերութեան միշտ միջնորդ, մեղսակից ու շահակից կը հանդիսանայ նաև Հայ պատրիարքարանի գործակատարը՝ տխրահռչակ Տէր Ներսէսեան Տիգրան էֆ., որուն լիրբ շահատակութիւններն ալ չափ ու սահման չեն ճանչնար: Անոր, անտէր Հայ կին, եթէ բանտարկեալ զաւակ կամ ամուսին կամ եղբայր ունիս, գնա՛ պատրիարքարան, հոն գործդ կը տեսնեն կամ, լաւ ևս է ըսել, Տիգրան էֆէնտիին կը յանձնեն, որ քո ունեցած-չունեցածդ ալ, խեղճ կին, ձեռքէդ խլելով, խաբեպատիր յոյսերով ու շատ անգամ ալ կոշտ ու կոպիտ խօսքերով խաղցնէ քեզ երկար տարիներ, առանց մազի չափ ծառայութիւն մատուցանելու: Ճամբո՞րդ ես. գնա՛ Տէր Ներսէսեան էֆէնտիին, խնդրէ անկէ: Եւ դուն, գաւառացի վաճառական, ի՞նչ կուզես. քեզի տարաժամ քշե՞լ կուզեն. կուզե՞ս մէկ-երկու շաբաթւան արտօնութիւն ձեռք բերել... շուտ ըրէ՛, գնա Տիգրան էֆէնտիին խնդրէ. միայն ուշադրութիւն ըրէք, որ սակարկութեան մէջ շատ չնեղացնէք զինք, որովհետև, այո՛, պէտք է ժամերով սակարկել: Հոգ չէ եթէ ան 50 կուզէ, դուն 10 տուր և մինչև 20 ելիր: Չունի՞ս, պէտք է ճարես՝ հագուստ-կապուստ ամէն բան ծախէ ու ճարէ այդ դրամը, որովհետև „ազնիւ", „մեծանձն" Տիգրան էֆ. Տէր Ներսէսեանը իրեն համար չէ որ պիտի առնէ այդ դրամը, այլ աստով պիտի կաշառէ կառավարական պաշտօնեաները, որ խնդիրքդ տեսնեն... Ինք մէկ կուտ ալ չ'առներ...

Այս տեսակ պաշտօնեաներ կան պատրիարքարանը: Բայց ո՞վ կը համարձակի բողոքել, գանգատիլ, և որո՞ւ. պատրիարքին ազգականն է արդէն Տէր Ներսէսեանը, որ եթէ Օրմանեանի երկնապարգև պատրիարքութիւնը վրայ չհասնէր, սնանկացած, ոչնչացած, մուրալու աստիճանին էր հասած, բայց հիմակ հարուստ է... շատ հարուստ: Քաղաքական Ժողովի՞ն բողոքել: Օհօ՛, պաթախանէ է պատրիարքարանը, յաճախ աւելի երկիւղալի քան շարք մը ուրիշ հիմնարկութիւններ:

Բայց կերևի վերջերս Կրօնական Ժողովը ալ չուզեր վախենալ սպառնալիքներէ ու մանաւանդ սին խոստումներէ. ձգձգումներէ ալ կշտացած է: Իզուր պատրիարքը ստիպելէ ետքը, որ անձամբ երթայ սուլթանին ամէն ինչ խօսի, պարզէ Թագրիրները, որոնք հազարաւորներով կը համրւին, ու պատասխան ուզէ, առաջարկեր են Խառն Ժողովին, որ երկու կրօնական և երկու ալ աշխարհական անդամներ ուղղակի դիմեն սուլթանին և խնդիրը պարզելով յայտնեն որ ալ անկարելի է, իրաց այս վիճակի մէջ, իրենց պաշտօնին շարունակել, հետևաբար և հրաման կը խնդրեն նոր ընտրութեան: Սակայն այդ որոշումը շատոնց արդէն Եըլդըզ հասած է, զի պատրիարքարանին մէջ կը վխտան լրտես պաշտօնեաներ և ժողովի անդամներ, որոնք անասելի կապեր ունին պետութեան հետ: Վերջիվերջոյ այդ իմաստով Թագրիր մը կը գրեն կը ղրկեն, այնքան անթիւ անհամար Թագրիրներու լեռնակոյտին վրայ հատ մըն ալ աւելցնելու և սուլթանին սադայէլի ծիծաղը շարժելու համար:

## ՆԱՄԱԿ ԲԷՅՐՈՒԹԷՆ

23 փետր. 1901

Ինչպէս ամէն տեղ, կառավարութիւնը հոս ալ կը կողոպտէ քրիստոնեաները, միջոցներու տարբերութիւնով միայն:

Քանի մը օր առաջ կուսակալի հրամանով՝ քրիստոնեաներուն (80 % բնակիչներուն) բռնի 3,000 ոսկի ցրուեցան, ի նպաստ աղքատաց հիւանդանոցին: Ամէն անոնք, որոնք իրենց երեխաներուն մէկ շաբաթւայ օրապահիկը, 10 ֆրանք, պաշտօնեաներուն չի յանձնեցին, օծիքնին չի կրցին ազատել:

Հանգանակւած դրամին ինչ ըլլալուն ալ պէտք չէ հարցնել, քանի որ աւագակապետը ինքն կուսակալն է:

Օրըօրին քրիստոնեաներուն համար անտանելի դժոխային դրութիւն կըստեղծւի. ամենափինթի մահմէդականին հետ չէ կարելի խօսիլ, մէյմէկ տէրէպէյի են ամէնքը. իսկ մենք, Հայերս, ամէնէն աչքէ ինկած պիղծ արարածներ ենք...

Դժբախտաբար Բէյրութի հայութիւնն ևս արդէն բացեր է անբարոյացման դրօշը, սկսած իր վանքէն, ուր կիշխէ Երուսաղէմի հաստափոր Մատթէոս Քայքճեանը: Հասարակութիւնը կարծես մոռցած է որ նոյնիսկ հայ է. ոչ դպրոց ունին, ոչ ազգային համերաշխ կապեր: Դուաճան Մատթէոս վարդապետը ուզածը կ'ընէ, և ձայն չեն հաներ, որովհետև եթէ Քայքճեան կատղի, աջ ու ձախ կը մատնէ, մեծը ու փոքրը, գիտցած-չգիտցածը: Արդէն երեք տարի առաջ այդ վարդապետը բաւական հայ երիտասարդներ աքսորել տւաւ: Այս տարւայ սկիզբն ալ Պօլսոյ թերթերէն մէկուն մէջ Բէյրութէն իր մասին գանգատ կար: Երբ այդ կարդացգազան արարածը չամչնալով ըսաւ. „Եթէ ժողովուրդը Պօլսոյ թերթերով զիս կը պարսաւէ, ես ալ իմ ձեռքէս եկածը պիտի ընեմ այդ ա պ ե ր ա խ տ ն ե ր ո ւ ն"... Խեղճ տղայ մը Արաբկիրի Ծագ գիւղէն, Պօղոս Զոպանեան անունով, Հալէպէն ոտքով Երուսաղէմ ուխտի գնացած ատեն, կը բռնեն և վեց օր հեծեալ զինւորին հետ քալեցնելով՝ կը բերեն հոս, կիսամեռ վիճակի մէջ, յետոյ կ'աքսորեն: Թրքացած վանահայրը, որ հայերու դէմ վրէժխնդրութեան կատղածութենէն բռնւած է, ոչ մէկ շարժում չըրաւ խեղճ տղան մխիթարելու:

Ամէն տեղ անբարոյականութիւնը սկսած է գլուխ վերցնել: Այս տեսակ պարագաներուն՝ անշուշտ ժողովրդին գիտակից նախաձեռնութիւնը անհրաժեշտ է:

## ՄԱՅԻՍԻ 1-Ը ԹԻՖԼԻՍՈՒՄ

(ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ *)

3 մայիս

Այն՝ ինչ որ կատարւեց ապրիլի 22-ին, կիրակի օրը, Թիֆլիսում, պատմական նշանաւոր դէպք պիտի համարւի Կովկասի կեանքում:

Ռուսաստանի սօցիալ-դէմօկրատական մի քանի կոմի-

*) Կովկասից գրած այս նամակը, որ կրում է Ն ո ւ բ ա ր ստորագրութիւնը եւ որ մենք տպագրում ենք բառացիօրէն՝ մեզ յանձնւել է Ժընէվում մամնաւոր կերպով: ԽՄԲ.

տէներ վճռել էին այս տարի մայիսի 1-ը տօնել քաղաքական ցոյցերով երկրի զանազան կենտրոններում։ Թիֆլիսը—Կովկասի մայրաքաղաքը—նոյնպէս ուզեց միացնել իր ձայնը ընդհանուր եղբայրական բողոքին, և ահա նախապատրաստուեց ապրիլի 22-ը։ Պէտք է ասել, որ արդէն 3-4 տարի է, ինչ որ Թիֆլիսի բանուորների մէջ նկատւում են յեղափոխական շարժման նշաններ։ Ռուսաստանից եկած ռուս ինտէլիգէնտներ և կովկասեան երիտասարդութիւնից մի շարք ընտիր անձնաւորութիւններ՝ եղան այդ գործունէութեան նախակարապետները մեզ մօտ։ Սոցիալիստական բովանդակութեամբ մեծ թւով գրքոյկներ, ռուսերէն, վրացերէն և հայերէն լեզուներով, բանուորական ժողովներ, դասախօսութիւններ, բանաւոր պրոպագանդ — ահա այն միջոցները, որոնք մեծապէս նպաստեցին մեր բանուորների ինքնագիտակցութեանը։ Մայիսի 1-ը արդէն տօնւում էր մեզ մօտ 3 տարուց ի վեր, բայց քաղաքից դուրս, հեռու ոստիկանութեան աչքերից։ Անցեալ տարի, օրինակ, չնայելով անձրևային վատ եղանակին, զանազան ազգութիւնների պատկանող աւելի քան 400 բանուորներ տօնեցին մայիսի 1-ը քաղաքից 8 վերստ հեռաւորութեան վրայ, բացօդեայ, մի ձորի մէջ։ Կառավարութիւնը անտեղեակ չէր սկսած շարժման և իհարկէ ամէն կերպ հետամուտ էր լինում բանուորական կազմակերպութիւններին, երբ անցեալ տարի օգոստոս ամսին պայթեց երկաթուղու արհեստանոցներում հազարաւոր բանուորների նշանաւոր գործադուլը։ Այդ օրուանից արդէն այլևս ոչ մի միջոց չէր խնայւում բանուորական շարժումը կասեցնելու համար։ Ամենօրեայ խուզարկութիւններ, խմբովին բանտարկութիւններ, աքսոր —սովորական երևոյթներ էին դառել բանուորական կեանքում։

Բայց ահա մօտենում է այս տարւայ մայիսի 1-ը (ապրիլի 18-ը)։ Ռուսաստանի զանազան կեդրոններում տեղի ունեցած դէպքերը երկիւղ են ներշնչում, որ մեզ մօտ էլ մայիսի 1-ը կարող է „խաղաղ" չանցնել և կառավարութիւնը արդէն ապրիլի 10-ից սկսած երկաթուղու արհեստանոցների շուրջը, քաղաքում գտնուող գործարանների և այլևայլ արհեստանոցների մօտ, ինչպէս նաև բոլոր բանուորական թաղերում, ահագին քանակութեամբ դրագունի և կօզակների գնդեր է կանգնեցնում՝ գիշեր ցերեկ անընդհատ պտտելու և բանուորներին ահ ու սարսափ ներշնչելու նպատակով։ Սակայն բանուորների մէջ մայիսի 1-ը տօնելու տենչանքը աւելի զօրեղ էր քան սպառնացող վտանգի երկիւղը, — և եղաւ այն՝ ինչ վճռւած էր։ Որոշւել էր, որ կիրակի օրը, ապրիլի 22-ին, մայիսեան տօնին մասնակցել ցանկացող բանուորները պիտի ժողովւէին Սօլդատսկի Բազարի մօտ, Ալէքսանդրեան այգու ներքևից անցնող փողոցում։ Այդտեղից բանուորները պիտի ուղղւէին Սօլդատսկի բազարի միջով դէպի Պուշկինեան փողոց, Երևանեան հրապարակ, Դվօրցովի փողոց և կառավարչապետի պալատի առջևից՝ Գօլովինսկի պրոսպեկտ։ Նշանակւած առաւօտեան ժամը 11-ին բանուորների թիւը անցաւ 1,000-ից։ Անմիջապէս տրւեց պայմանական նշանը, և բանուորական կարմիր դրօշակը ծածանւեց բազմութեան առաջ։ Օդը թնդաց կեցցէներով. „կեցցէ՛ հանրապետութիւն", „կեցցէ՛ ազատութիւն", „կեցցէ՛ ութժամեայ աշխատանք" և ն։

Դրօշակի վրայ գրւած էին, ռուսերէն, վրացերէն և հայերէն լեզուներով Մարքս-Էնգելսեան մանիֆեստի կոչը՝ „Բոլոր երկրների պրոլետարներ, միացէ՛ք" և „բանուորական ութժամեայ աշխատանք" խօսքերը։ Դրօշակի վրայ կային նոյնպէս Մարքսի, Լասսալի և Էնգելսի պատկերները։ Խումբը բուռն ոգևորութեամբ առաջ շարժւեց։ Կառավարութիւնը, որ վաղօրոք հոտ էր առել պատրաստւող ցոյցի մասին, հէնց դրան էր սպասում։ Իր լրբութիւններով հռչակւած ժանդարմների կապիտան Լավրով, որ բազմաթիւ լրտեսներով, ոստիկաններով ու զինւորներով պատում էր կիրակի օրւայ բազարի առթիւ խմբւած ամբոխի մէջ, դիմեց իր „պարտականութիւնների կատարմանը"։ Հրամայւեց ցրւել բանուորներին, և զինւորներն ու ոստիկանները ամենակատաղի յարձակում գործեցին նրանց վրայ։ Տեղի ունեցաւ սոսկալի ընդհարում, Թիֆլիսում չտեսնւած մի տեսարան... Ոստիկաններն ու զինւորները հարւածում էին մերկացած սրերով, իսկ բանուորները իրենց պաշտպանելու համար ունէին միայն իրենց ջլոտ բազուկները և այն, ինչ ձեռքի տակ կ'ընկնէր փողոցում։ Ամբողջ քաղաքը իրարու անցաւ։ Հուտով վրայ հասան ոստիկանապետը, գունդ-գունդ կօզակներ և զօրքեր ու վերջապէս նահանգապետը։ Ձիաքարշները տեղ-տեղ դադարեցին շրջելը։ Շատ սրտաշարժ էր տեսնել՝ թէ ինչպէս ձիաքարշի մի քանի վագոններից կառապանները և կոնդուկտորները փախչում էին կուի ասպարէզը՝ անզէն ժողովրդին օգնութեան հասնելու...

Կռիւը, յուսահատ կռիւը, տեւեց ամբողջ $^1/_2$ ժամ։ Շատ արիւն թափւեց, շատ վիրաւորւածներ ընկան... Բանուորներից մէկը թէև ծանր վիրաւորւած և զինւորի ոտքի տակ ընկած՝ բայց և այնպէս բարձրաձայն գոչում էր. „կեցցէ՛ սոցիալիզմ, կեցցէ՛ ութժամեայ աշխատանք"։ Դրօշակակիր յաղթանդամ, անվեհեր բանուոր Առաքելը, երբ մերկացած սուրը վրայ են բերում նրա ձեռքին խփելու և դրօշակը խլելու համար, առնում է սուրը և ձեռքով ծալում-կոտրում է։ Մի օրիորդ (մի քանի ուսանողուհիներ էլ կային մասնակցողներ)՝ տեսնելով պրիստաւներից մէկի անգթութիւնները՝ ինքնամոռաց զայրոյթով յարձակւում է նրա վրայ ու մազերը փետում, մունդիրը պատռտում։ Բանուոր Մախարաձէ՝ սրի ծանր վէրքեր ստանալով՝ 3 անգամ ատրճանակ է արձակում ոստիկանների վրայ, որոնցից 2-ը վիրաւորւում են։ Պրիստաւ Գեգեվանովը նոյնպէս ծանր վիրաւորւած է։ Ոստիկանապետը այնպիսի մի հարւած է ստանում ոտին, որ սրունգը ջարդւում և ձիուց վայր է ընկնում։

Մի ժամից յետոյ կառավարութեան բարբարոս ուժի շնորհիւ „կարգը վերականգնւեց", բայց և այնպէս դէպքից յետոյ ամբողջ 3 օր Թիֆլիսի փողոցներն ու բանուորական յայտնի թաղերը բռնւած էին զօրքերով. իսկ կիրակի օրերը մինչև այժմ էլ ամբողջ ոստիկանութիւնը ոտի է կանգնեցնում։ Բանտարկւած են բազմաթիւ բանուորներ։ Պաշտօնական լրագիր „Կավկազը" ցոյց է տալիս 41 հոգի բանտարկւածներ, որոնց թւում 9 հոգի վիրաւորւածներ, բայց այդ թիւը շատ նւազ է իրականից։ Ձերբակալւած են ցոյցի տեղում Պետերբուրգից նոր եկած 3 ուսանողուհիներ։ Մի ուսանող, ազգով գերմանացի, պատահմամբ ականատես լինելով անցքին, պաշտպանում է բանուորներին և ծանր վէրքեր է ստանում ոստիկանութիւնից։ Լուր կայ, որ ուսանողը արդէն մեռել է բանտում։ Մահամերձ հիւանդ

է նոյնպէս բանւոր Մախարաձէն։ Շատ վիրաւորեալներ և ջարդւածներ կան բանւորներից իրենց տներում և բանտերում։ Բանտարկեալների թիւը հարիւրից անց է։ Մետեխի և նահանգական բանտերը այնչափ լցւած են, որ սկսել են նոր ձերբակալւողներին զինւորական բանտը տանել։

Այժմ, երբ գրում եմ այս տողերը, համեմատաբար խաղաղութիւն է տիրում քաղաքում. սակայն ուշ գիշերներին խուզարկութիւնները շարունակւում են։ Ուրախալին այն է, որ՝ չնայելով կառավարութեան բոլոր խստութիւններին, շարժումը բանւորների մէջ ոչ միայն չի նւազում, այլև աճում ու արդէն շատ որոշ գոյն է ստանում։

# ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

## ՍԵՐՈԲ-ԱՂԲԻՒՐ

(Շարունակութիւն. — Տես № 3)

Հինգ տարի պանդուխտ մնալէ ետքը՝ Սերոբ, որոշ ծրագրով և աւելի հասունցած ու կազմակերպւած գաղափարներով, վերադարձաւ իր հայրենի երկիրը, որուն հողն ու ջուրը կը քաշէին զինքը։ Իր գործունէութեան կեդրոն և վայր ընտրեց մասնաւորապէս Ախլաթի գաւառը և ընդհանրապէս Բաղէշի նահանգը։ Կառավարութիւնը շատոնց մոռցեր էր սպաննւած քրդերու խնդիրը, սակայն քրդերը երէկւան պէս դեռ մտքերնին էին պահեր այդ սպանութիւնները և չէին մոռցեր։ Ժողովուրդը իրաւամբ կ'ըսէ. „Հազար տարին կանցնի, քիւրդի տարին բ ը ս ա ք, բ ը ս ա ք (սպասէ, սպասէ) չանցնիր“։ Սակայն և այնպէս Սերոբ մինչև երկու տարի կրցաւ երկրին մէջ ազատ շրջիլ առանց մեծ կասկած հրաւիրելու։

Հայկական խնդրի շուրջը բարձրացած յուսատու աղմուկները, կոտորածները, յեղափոխականներու գերմարդկային ճիգերը բաւականին թօթւած էին ժողովրդին թմրութիւնը։ Սերոբ, հայ ժողովրդին նոր զարթող կենդանի խռովքէն օգտւելով, հուժկու ինքնավստահութիւնով բրօբականդի ձեռնարկեց. Մուշ, Սասուն, Բաղէշ, Պուլանըխ ևլն աշխարհք ման կուգար, երիտասարդութիւնը իր հայրենասիրական կոչումին ճամբուն մէջ դնելու, անոնց սէր ու հոգի ներշնչելու համար։ Երկար ատեն, չէրքէզի զգեստով կամ ուրիշ տարազով ծպտւած, իր ափ մը ընկերներով ժուռ կուգար, ամէն տեղ կապեր հաստատելով ու կոմիտէներ կազմելով։

Սերոբ առիւծի սիրտ ունէր, ինչպէս նաև քաղցր լեզու, այնպէս որ իր անուշ և վեհանձն բնաւորութեան շնորհիւ այնքան սիրելի ու պաշտելի եղաւ ժողովրդին, որ անոր մէկ խօսքը երկուք չէր ըներ։ Բացարձակ հեղինակութիւն շահած էր Ախլաթի, Բաղէշի, Բուլանըխի մէջ։ Այս վերջին գաւառին նախկին գործիչներու կողմէ հեգնօրէն „կենդանի ննջեցեալ“ անունը կը տրւէր, որովհետև հոն երբեք ոչ ոք յաջողութիւն չէր ունեցած։ „Հովիւը հովւին լեզւէն լաւ կը հասկնայ“ — կ'ըսէ ժողովրդական առածը. այսպէս եղաւ նաև Սերոբի համար, որ իր դիւթող լեզւով և իր փայլուն մ ա ւ զ է ր — զոր „մավի-զար“ կ'արտասանէին — հրացանով գերեց գաւառին բոլոր երիտասարդ սրտերը։ Միենոյնը տեղի կունենար Բաղէշի մէջ։ Մինչև 95 թ. Բաղէշ Հայաստանի հրէաներու ժողովածու մը նկատւած էր։ Բայց 96-ի կոտորածներէն ետքը, Սերոբի և հերոս Գուրգէնի անմիջական ազդեցութեան տակ, պատկառելի ուժ մը ծնաւ, որ կառավարութեան ոչ-նւազ մտահոգութիւն պատճառեց։ Բաղէշի կառավարիչը, եկաւ ժամանակ մը, որ օր ու գիշեր Սերոբին Բաղէշ մտնել-ելլելու լրտեսական լուրերով զբաղած էր, որուն հետևանքն եղան երկար և ապարդիւն խուզարկութիւններ։ Ձանձրացած՝ վալին այլևս ամէն մատնիչի չէր հաւտար։ Սակայն Սերոբի անունը երթալով սարսափ կազդէր քաղքըցիներուն, որու վրայ որոշւեցաւ որ քաղքին ցերեկւան պաշտպանութիւնը յանձնւի թիւրքերուն, գիշերը հայերուն։ Քանի մը օր վերջը, երբ փօլիս Ֆէհմի էֆէնտին սպաննեցին, ոչ միայն թիւրքերը, այլ նոյնիսկ կառավարութիւնը չէր համարձակէր գիշերները դուրս գալ, խուզարկութիւններ կատարել կամ ճամբաները պահել։ Հակազդեցութիւնը զօրեղ էր. շատ յայտնի մատնիչներ ջերմ ազգասէրներ դարձան և Սերոբին ոևէ պաշտպանութիւն չէին խնայեր։

Ախլաթի մէջ Սերոբի գործունէութիւնը աւելի հզօր կերպով շեշտւեցաւ։ Հոն ամէն տեղ դռները բաց էին իր առջև։ Բայց քիւրդերը և քանի մը դաւաճան հայեր կ'աշխատէին մանրամասն տեղեկութիւններ հաւաքել և օրըօրին հաղորդել կառավարութեան։

Այդ ամառը „ջան-ֆէդայիներու“ շարունակ արշաւանքներէն՝ քրդերուն սիրտը դողը պատած էր. „Սասուն կոտորւող իրենց եղբայրներուն վրէժը լուծելու համար, Ռուսիայէն եկած ջան-ֆէդայիներ կը վխտան այս կողմերը, որոնց մէջ է այն քաջ մարդը, որ ժամանակ մը յայտնի էր ամէնքին Սոխորդայ Սերոբ անունով“։ Կերթային քրդերը այսպէս կը պատմէին կառավարութեան։ Կառավարութիւնը սկսաւ իր խուզարկութիւնները, իսկ քրդերը, ահ ու սարսափի մատնւած, մէկ երկու հոգով երբեք չէին համարձակեր հայ գիւղերը ոտք կոխել, ինչպէս առաջները, երբ ամէն անբարոյականութիւն և գողութիւն թոյլ կուտային իրենց։

Սերոբ սրտի անհուն գոհունակութիւն մը կըզգար՝ տեսնելով իր անձնւէր և հայրենասէր գործունէութեան բարի արգասիքը։ Բայց որպէս զի իր սիրած ժողովրդին ապահովութիւնը չի վտանգւի և կարող ըլլայ ամէն րոպէի պատրաստ գտնւիլ օգնութեան վազելու համար, ձգեց երդիքը և փոխադրւեցաւ լեռնէլեռ, ուր էին իր հողմասոյլ ծառէ պալատները, երկնքի կախ ջահերը և ազատութեան ճամբան։

97-ի ամառը Հասնանցի քիւրդ ձիաւորներ Թեղուտ գեղի տաւարը կը քշեն։ Աղբիւր, լսածին, չորս ընկերներով կը վազէ, կը յարձակի քիւրդերուն վրայ, որ տաւարները ետ առնէ։ Կատաղի կռիւ մը տեղի կ'ունենայ։ Քրդերէն երեքը՝ տաւարը առջևնին ձգած՝ արագ կը քշեն, մինչդեռ մնացածը կը շարունակէ կռիւը, որ կը տևէ վեց ժամ և կը վերջանայ գիշերւան ժամը մէկին։ Քիւրդերը իրենց շատւորութեան շնորհիւ կը յաջողին փախցնել արջառները, բայց կռւի դաշտին մէջ կը ձգեն քանի մը դիակներ և վիրաւորներ, առանց հայերուն վնաս մը դպնելու։

Աղբիւր իր դաշնակցական պզտիկ ուժով պահապան հրեշտակն էր դարձեր այդ կողմի հայ գիւղերուն և Ազրայէլը՝ իր թշնամիներուն։

Օրին մէկը Սոխորդ գիւղին վերև, քսան րոպէ հեռու,

Ս. Աստուածածին անունով հին մատուռի մը մօտ նստած էր Սերոբ իր երկու ընկերներուն հետ, որոնց մէկը Հ... առիւծի պէս տղամարդ մը, տաքտաք կը վիճէր հրացանով. նշանառութեան մասին, որուն մէջ Սերոբ անզուգական էր։ Յանկարծ վարի ձորէն ձայն, աղմուկ կը լսի։ Հասնանցի երեք քիւրդ ձիաւորներ էին, որոնք, գիւղացիներուն դաշտերը աշխատանքի ելած ատեններն՝ Ծղակ գիւղի նախիրը օրցերեկով եկեր յափշտակեր կը տանէին։ Ո՞վ կը համարձակէր նէմրուտ լեռներուն մէջ հասնանցիներուն հետևիլ,—եօթը գլխէն դև ըլլալու էր։

Աղբիւր աս տեսածին պէս սիրտ կուտայ ընկերներուն և դառնալով Հ...-ին՝ „խօսքի ժամանակ չէ հիմա, ահաւասիկ թալանը մեր վրայէն պիտի անցնի. ձեզ տեսնեմ, շտապեցէք խլել անոնցմէ"։ Երկու ընկերները ծառթուփերու մէջէն կը քալեն աւազակներուն վրայ։ Աղբիւրը, ինք անխռով նստած, արծիւի աչքերով կը հետևէր իր ընկերներու ընելիքին։ Քիւրդերը կը մօտենան, հայերը հեռուէն կը կանչեն որ թալանը ձգեն. քիւրդերը մտիկ չեն ըներ, ընդհակառակը կատաղաբար կրակ կընեն, որոնց կը պատասխանեն հայ երիտասարդները։ Աղբիւր տեսնելով, որ իր ընկերներուն դիրքը խախուտ է և չպիտի կրնան քրդերը վանել—արդէն Հ...ն ալ կը կանչէր. „Աղբիւր ջան, հասիր, Աղբիւր ջան",—կը ցատկէ անմիջապէս և առաջին գնդակին՝ մէկուն աջ ձեռքի երկու մատները թոցնելով, ասպետաբար հեռուէն ձայն կուտայ կռօներուն. „Ես Սերոբն եմ, այժմ երկու մատներնիդ կտրեցի, որովհետև համարձակեցաք գնդակ արձակել ընկերներուս վրայ. եթէ շարունակէք, երեքդ ալ աս րոպէին Նէմրուտի թռչուններուն կեր կ'ընեմ"։ Քիւրդերը տեսնելով իրենց վիրաւոր ընկերը՝ սարսափահար կը ձգեն նախիրը ու կծիկը կը դնեն։

Աղբիւրի տաքտիքն էր, ամէն անգամ, երբ դէպք մը պատահէր, համարձակօրէն իր թշնամիներուն երեսին կ'ըսէր. „Ես Սերոբն եմ, որ այս գործը կ'ընեմ. չըլլայ որ անմեղ ժողովրդին դպչիք"։

Յարատև, անխոնջ և ջերմեռանդ աշխատութիւնով Սերոբ յաջողած էր բաւական թիւով վրիժառու հերոսներ պատրաստել, որոնք՝ հմայուած իրենց վարպետին, այդ հերոսական սրտի տէր զինուորին անձնուէր և հիանալի գործունէութենէն, ամէն զոհաբերութեան և սխրագործութեան պատրաստ էին։

Սերոբ, աղբիւրը ազատութեան ծարաւի ժողովրդին, իր էքնաղ կնոջ Սօսիին սրտին մէջ գտած էր ներշնչումի մաքուր խորան մը և գիւղազնուհիի մը սարսուռը։

„Բաղէշ վիլայէթ Անուշ Սաղնոյ ծոր,
Սօսին կը կանչէ, հոգի ջան, կեանքդ ազգին տուր"։

(Շարունակելի)

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐ

(ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ)

### VII

Որքան աւելի ենք առաջանում 19-րդ դարի պատմութեան մէջ, այնքան աւելի է շեշտւում „ազգայնական" գաղափարը, անկախ, ինքնավար ազգայնութեան սկզբունքը։ Ժամանակակից քաղաքակրթութեան տիրապետող գծերից մէկն է դա, թերևս խոշորագոյնը։ Կարելի է ասել ընդհանուր առմամբ, որ այդ սկզբունքը 19-րդ դարու ծնունդ է. „ազգայնութիւն"՝ անտրոպոլոգիական ու քաղաքական նշանակութեամբ չկար առաջներում կամ բացառիկ երևոյթ էր։ Յունաստան, Բուլգարիա, Սերբիա, Ռումանիա, Ունգարիա, Իտալիա, Գերմանիա ևն, իբրև ուրոյն ու քաղաքականապէս կազմակերպուած ազգային մարմիններ, գոյութիւն չունէին։ 19-րդ դարը դուրս կանչեց նրանց անյայտութեան կամ ստրկութեան անդնդից և դրեց խաղաղ ու բնականոն զարգացման ճանապարհի վրայ։

Սակայն անցեալ դարում „միջազգայնութեան" գաղափարը ևս, ինչպէս արդէն տեսանք, ծնունդ առաւ գործնական կեանքում և աճեց մասսաների գիտակցութեան մէջ։ Թւում է, թէ հակասութիւն կայ այդտեղ, բայց այդ հակասութիւնը անվերածելի չէ. „ազգայնութեան" և „միջազգայնութեան" գաղափարները, մինը իբրև հետևանք քաղաքական-ազատագրական շարժումների, միւսը իբրև ծնունդ սօցիալական էւոլիւցիայի, և երկուսը՝ իբրև անխուսափելի արգասիք տնտեսական-կուլտուրական զարգացման՝ առաջ ընթացան զուգակցաբար, մերթ իրարու խանգարելով, մերթ ձեռք ձեռքի տուած, ներդաշնակ, իբրև լրացուցիչ գաղափարներ, երկուսն էլ հաւասարապէս անհրաժեշտ համամարդկային քաղաքակրթութեան համար։

Ազգային միութեան ու անկախութեան հարցը ամէն տեղ հերթական էր. Նապոլէօն III ինքն էր հանդիսանում նրա պաշտպան-խրախուսող։ Նապոլէօն III-ի շնորհիւ Իտալիան իրագործեց իր միութիւնը. հերթը Գերմանիային էր։ Պրուսիան գերմանական աշխարհում այն կորիզն էր, որ պիտի կատարէր Պիէմոնտի դերը։ Եւ Պրուսիան ասպարէզ հանեց նոյն պատմական երրորդութիւնը՝ յանձին Վիլհէլմի, Բիսմարկի ու Մոլտկէի — երեք անձնաւորութիւններ, որոնք կոչուած էին տնօրինելու գերմանական մեծ ազգի ճակատագիրը։ Իւրաքանչիւրը նրանցից իր տեղն ունէր, անշուշտ, բայց Բիսմարկ իր հազւագիւտ, դիւային հանճարով գերազանցում էր բոլոր միւսներին։ Նա այդ երրորդութեան կենտրոնական դէմքն էր, որ կարողացաւ յետագայում իր վրայ բևեռել ամբողջ Եւրոպայի լարուած ուշադրութիւնը։

Գերմանիայի միութեան գործը մի քանի անհատների գործ չէր սակայն։ Համաշխարհային պատմութեան բեմի վրայ անհատները հանդէս են գալիս ոչ իբրև ամենակարող գործօններ, որոնք ստեղծագործում են ex nihilo, այլ միայն իբրև սպասաւորներ իրենցից անկախ որոշ փակտօրների, իբրև արձագանքներ տնտեսական և իդէօլոգիական պատճառներից բղխող որոշ տրամադրութիւնների։ Վաղուց հնչում էր քարոզը գերմանական միութեան։ Վաղուց փիլիսոփաներ, բանաստեղծներ ու հրապարակագիրներ իրենց բեղմնաւոր, հըսկայական երկերով գիտակցաբար կամ անգիտակցաբար կերտում էին ապագայ հոյակապ շէնքի խարիսխը։ Գեօթէ ու Շիլլէր գրականութեան մէջ, Կանտ, Ֆիխտէ ու Հէգել փիլիսոփայութեան աշխարհում, տիեզերական հռչակ վաստակելով, վաղուց տարածում էին երկրագնդի վրայ գերմանական անունը, նրա խորունկ հանճարի արգասիքը։ Պրուսիայի ու Բավարիայի կամ Բադէնի ու Վիւրտեմբերգի անջատական ներկայացուցիչները չէին դրանք, այդ տիեզերական հանճարները, այլ Գերմանիայի

զաւակները — այդպէս էր ճանաչում նրանց աշխարհը, այդպէս էին ճանաչում նրանց գերմանական ազգի ցիր ցան տարրերը, բախտի բերմամբ բաժանուած ու իրարու թշնամի գերմանական կանտոնները։ Եւ նրանք պարծենում էին այդ անուններով, սնւում, դաստիարակւում էին դրանց անմահ երկերով։ Զենք մոռացել, անշուշտ, ազատագրական այն վսեմ թռիչքը, որը Բօնապարտեան արշաւանքների միջոցին ոտքի հանեց ամբողջ Գերմանիան, յանուն ոտնակոխ ու բռնաբարուած հայրենիքի։ Զենք մոռացել, անշուշտ, Կեօրնէրի, Ֆիխտէի և այլոց սրտառուչ ու գերազանցապէս հայրենասիրական քարոզները տակաւին դարու սկզբներում... Որքա՜ն մեծ զարկ էր այդ ամէնը ազգային ինքնաճանաչութեան և ապագայ Միացեալ Հայրենիքի նախապատրաստութեան համար։ Ընդհանուր գրականութիւն ու լեզու, թատրոն, գիտութիւն ու փիլիսոփայութիւն և վերջապէս տնտեսական պայմաններ — ահաւասիկ այն խոշոր մոմենտները, որոնց վրայ պէտք է ծանրանալ, երբ ուզում ենք լուսաբանել մեզ „Գերմանական Միութեան“ նախապատմութիւնը։

Այո՛, նաև տնտեսական պայմաններ։ Մեքենայական արդիւնաբերութիւնը, որ ինչպէս արդէն տեսանք, 50-ական թուականներում ներմուծուել էր եւրոպական ցամաքային երկիրները, ստեղծեց կարճ միջոցում ընդհանուր միլազգային վաճառանոց, որի հետևանքն էր՝ տենդային մրցակցութիւն արդիւնաբերող այլևայլ ազգերի մէջ։ Իւրաքանչիւրը նրանցից ձգտում էր շուտընդփոյթ իւրացնել արդիւնաբերական յառաջդիմութիւնները, որ մինչ այն Մեծ-Բրիտանիայի բացառիկ մենաշնորհն էր, և ոչնչացնել հին, աւատական սիստէմի հետ կապուած այն պայմանները, որոնք արգելք էին լինում տեղական ինդուստրիայի առաջադիմութեան։ Իւրաքանչիւրը ձգտում էր այդպիսով վայելուչ տեղ բռնել միջազգային շուկայում և թոյլ չտալ ուրիշին՝ գրաւելու իր սեփական, ազգային վաճառանոցը։ Գերմանիան ևս այդ մրցակցութիւնից դուրս չմնալու համար՝ կարօտ էր խորունկ բարենորոգումների։ Ներսում բարգաւաճելու և արտաքին աշխարհում հմայք ձեռք բերելու համար՝ անհրաժեշտ էր վերացնել ներքին երկպառակութիւնները, մանր-մունր պետութիւնների փոխադարձ թշնամութիւնը, անջատական ոգին, պէտք էր հարթել միջնադարեան պարտիկուլարիզմի մնացորդները, մաքսային կաշկանդող ռէժիմը, տարբեր դրամներն ու ծանրութեան չափերը ևն ևն։ Պէտք էր վերջապէս կազմակերպել հզօր ու միայն զօրք, որը կարողանար անհրաժեշտ դիպուածներում հպարտ ու աներկիւղ ծածանեցնել գերմանական դրօշը համաշխարհային մրցման կրկէսում։ Ահաւասիկ պահանջներ, անդիմադրելի, հրամայական՝ որոնք ուրիշ, գաղափարական պատճառների հետ օղակաւորուած՝ զգացնել էին տալիս գերմանական ազգին և մասնաւորապէս իշխող տարրերին՝ մէկ ամբողջական, ձոյլ հայրենիքի անհրաժեշտութիւնը։ Օտտօ Բիսմարկ կրող (Fräger) հանդիսացաւ համազգային այդ գիտակցութեան և քսան տարուայ մէջ իրագործեց Միութեան իդէալը, մակիավէլական բարբարոս քաղաքականութեամբ, արեան ու երկաթի ճանապարհով։

Նրա ծրագիրն էր՝ նախ հարուածել Աւստրիային, որը գերիշխող դիրք ունէր գերման պետութիւնների դաշնակցութեան մէջ, ու այդպիսով ապահովել Պրուսիայի առաջնութիւնը գերմանական աշխարհում և ապա հարուածել Ֆրանսիային ու ձեռք բերել առաջնութիւն ամբողջ Եւրոպայում։

Եւ նա սկսեց մի քաղաքականութիւն, որի նշանաբանն էր՝ „ուժը վեր է իրաւունքից“։ Այդ սկզբունքի առաջին կիրառումը եղաւ Շլեզվիգ-Հոլշտայնի յափշտակումը և Դանեմարքի անդամատումը պրուսօ-աւստրիական դաշնակից զօրքերով։ Շլեզվիգ-Հոլշտայն և Լաուէնբուրգ՝ դառնալով երկու հզօրագոյն գերման պետութիւնների ընդհանուր սեփականութիւն՝ եղան շուտով տարաձայնութեան ու սուր պայքարի աղբիւր երկուսի միջև։ Աւստրիա և Պրուսիա՝ միանգամայն հակառակ քաղաքական ձգտումներով՝ պիտի վաղ թէ ուշ բալխէին իրար, և երկու տարի չանցած՝ պատերազմը յայտարարուեց... Հետևանքը յայտնի է — աւստրիական զօրքի ջարդը Սադօվայում 3 յուլիսի 1866։ Աւստրիան արտաքսուեց գերմանական դաշնակցութիւնից, և Պրուսիան ստացաւ գերակշռող դեր, որով բիսմարկեան ծրագրի մի կարևոր մասը լրացաւ արդէն։

Նապոլէոն III, որ սպասում էր Պրուսիայի պարտութեան՝ խիստ դժգոհ եղաւ պատերազմի ելքից և սկսեց խստաբար հատուցում պահանջել Պրուսիայից, փոխարէն այն ծառայութեան, որ նա մատուցել էր այդ վերջինին իր չեզոքութեամբ պատերազմի ժամանակ։ Այդ պահանջկոտ դիրքը աւելի քան հաճելի էր Բիսմարկին. նրան պէտք էր մի պատրուակ, որով կարողանար նա փութացնել այն բաղձալի ընդհարումը, որը պիտի իրականացնէր իր փայփայած ծրագիրը, և նա իր կողմից ոչ մի միջոց չխնայեց՝ աւելի և աւելի գրգռելու Նապոլէոնին։ Վերջինս չբմբռնեց այդ։ Պահանջ պահանջի ետևից, մինը միւսից ամբարտաւան ու վերաւորիչ, ուղղուեցին պրուսական դիւանատան և երկու պետութիւնների յարաբերութիւնները դարձան միշտ աւելի սուր, պատերազմական։ Հոհէնցոլլերն իշխանի թեկնածութիւնը սպանիական գահին՝ նետեց վերջապէս կայծը վառօդի տակառի մէջ։ Ծայրայեղ անզգուշութեամբ, հազագիւտ, անորակելի թեթևամտութեամբ Նապոլէոն III պատերազմ յայտարարեց Պրուսիային 19 յուլիս 1870... Բիսմարկ վեր բարձրացրեց ձեռնոցը, և երկու արևմտեան քաղաքակիրթ ազգեր դուրս եկան ահեղ մենամարտութեան։

Բախտը ժպտում էր Պրուսիային. ամբողջ Գերմանիան խոստանում էր նրան գործօն աջակցութիւն։ Վիրաւորուած ազգային հպարտութիւնը գրոհ տուեց գերմանական բոլոր կանտոններից և անթիւ լեգիոններ, երկաթէ, զինավարժ՝ Մոլտկէի հրամանատարութեան տակ գահավէժ սլացան դէպի սահմանագլուխ։

„Դէպի Բերլի՛ն“... հնչեց Հռէնոսի միւս կողմը տարածուող դիւցազնական աշխարհից։ „Դէպի Բերլի՛ն“ որոտացին հարիւր հազարաւոր բերաններ այն երկրից, որը երբէք տևողաբար չէր խոնարհուել ոչ մի արտաքին կամ ներքին թշնամու առաջ և որի խանդավառ զաւակները 1792-ին արիութեան հրաշքներ գործեցին, դիմադրելով ամբողջ պաշտօնական, դաշնակից Եւրոպայի արշաւանքին։ Աւա՜ղ... Հասել էր եղերական ժամը, երբ՝ խաբուած ու դաւաճանուած իր անարժան վարիչներից՝ նա պիտի ճկէր իր հպարտ պարանոցը թշնամու սրի առաջ, պիտի ընկճուէր ու անձնատուր լինէր՝ ամօթահար, ոչնչացած...

Ֆրանսիան անպատրաստ էր։ Նապոլէօն III յոյս էր դրել դաշնակիցների վրայ, բայց ոչ ոք չՀայտնուեց։ Ռուսաստանը չէր կարող մոռանալ այն բուռն համակրութիւնները, որ Ֆրանսիայի թագաւորը յայտնում էր քիչ առաջ ապստամբ լեհերին։ Աւստրիան ու Իտալիան էլ խոստանում էին օգնութիւն միմիայն այն ժամանակ, երբ ֆրանսիական զօրքը կը տանէր առաջին փայլուն յաղթութիւնը։ Վստահելի դաշնակիցներից զուրկ՝ Նապոլէօն III-ի կառավարութիւնը չէր հոգացել անգամ ամենատարրական նախապատրաստական միջոցների մասին, և ահա հէնց առաջին քայլերից՝ ֆրանսիացիք ջարդ կրեցին Վիսսեմբուրգում, Ֆրոշվիլլէրում, Ֆորբախում, ուր յարձակողական դիրք էին բռնել Մակ-Մահօնի ընդհանուր հրամանատարութեան տակ։ Գերմանացիք ներս խուժեցին Էլզաս-Լոտարինգիա... ընդմիշտ հաստատելու այնտեղ։ Մեց, Շտրասբուրգ և ուրիշ ամրութիւններ մին-միւսի ետևից թշնամու ձեռքն անցան և Նապոլէօն III գերի բռնուեց Սեդանում 84,000 զօրքով... Ներքին արհաւիրքներին աւելացաւ շուտով ամենածանր, ամենասոսկալի հարուածը — դաւաճանութիւնը։ Բազէն, որ իբրև փորձառու, հեղինակաւոր զօրավար՝ ընդհանուր հրամանատարութիւն էր ստանձնել Լոտարինգիայում, պաշարիւն ու կորովի զինուոր, բայց և եսամոլ ու փառատենչ, հայրենիքի գերագոյն շահերը իր ոճրագործ էգոյիզմին ստորադրող Բազէն՝ առաջին ջարդերի լուրն առնելով և արդէն նախատեսնելով խաղաղութեան դաշինքի անխուսափելի ստորագրումը, գիտակցաբար անշարժութեան դատապարտեց իր կազմ ու պատրաստ գնդերը, պատերազմի ծարաւ ու դիմադրութեան ընդունակ՝ մօտ 200,000 ֆրանսիական զօրքը։

Նա գիտէր, որ թագաւորը գերի էր բռնուած, թագաժառանգը՝ Անգլիա ապաստանած. նա գիտէր, որ կայսրութիւնը տապալուել էր և որ հանրապետական դրօշն էր պարզուել Ֆրանսիայի մայրաքաղաքում... Ո՞վ պիտի լինէր հայրենիքի պաշտպանը այդ անորոշ վիճակում, այդ գերագոյն ճգնաժամին, եթէ ոչ նա ինքը՝ Բազէն... Եւ խաղաղութիւնը անձամբ ստորագրելու տենչով՝ նա շտապեց բանակցութեան մտնել թշնամու հետ։ Բիսմարկ, Նենգամիտ քաղաքագէտը, ոչ մի միջոց չէնայեց՝ շոյելու Բազէնի փառամոլութիւնը, չէզոքացնելու նրա ուժը և այդպիսով ապահովելու գերմանական զօրքի յաղթական ընթացքը դէպի Պարիզ։ Եւ նա հասաւ իր նպատակին. Բազէն յօժարակամ անձնատուր եղաւ, և ֆրանսիական լաւագոյն զօրքը պատերազմական մթերքներով յանձնեց թշնամուն...

—

Սեդա՜ն... Կատաստրոֆի լուրը կայծակի արագութեամբ տարածուեց Ֆրանսիայի բոլոր անկիւններում։ Երկիրը ցնցուեց և մի վայրկեան չէր ուզում հաւատալ սարսափելի եղելութեանը։ Սոսկումն ու արհաւիրքը կրկնապատկուեցին, երբ միլիոնաւոր արձագանքներով որոտաց Ֆրանսիայում՝ Գամբետտայի լալագին ճիչը՝ „Բազէն դաւաճանե՜ց“... Պարիզը խլրտաց, և հազարաւոր բերաններից դուրս թռաւ ժոլեգին աղաղակը՝ „կեցցէ՛ հանրապետութիւն“։ Սեպտեմբեր 3-4 (1870) գիշերը Ժիւլ Ֆաւը յայտարարեց Օրէնսգիր Ժողովում կայսրութեան տապալումը։ Յեղափոխական տրամադրութիւնը աճեց, շարժումը սաստկացաւ. 4 սեպտեմբերի անմոռանալի օրը ամբոխը պաշարեց ազգային պատգամաւորական ժողովը. սենատը լուծուեց, և մինչ Գամբետտա ընդհանուր խանդավառութեան մէջ ծանուցանում էր հանրապետութեան հաստատումը, թագուհին ու արքայական կուսակցութեան պարագլուխները փախուստ տուին Անգլիա։ Այդպիսով մէկ օրուայ մէջ օդը ցնդեց ոճիրով ու դաւաճանութեամբ վերականգնուած կայսրութեան գարշելի մեքենան։ Երրորդ հանրապետութիւնն էր հաստատուում՝ ֆրանսիական հողի վրայ. երրորդը... յուսպնք, և վերջինը։

Հանրապետական կառավարութիւնը տենդային արագութեամբ սկսեց կազմակերպել „ազգային պաշտպանութեան“ գործը։ Պէտք էր կոչ անել ամբողջ երկրին, պէտք էր գէթ մասամբ վերականգնել Ֆրանսիայի արատաւորուած պատիւը։ Եւ ահա Գամբետտա, մեծ հայրենասէրը, սկսեց իր նշանաւոր, դիւցազներգական պտոյտը։ Իբրև մարմնացած վրէժխնդրութիւն՝ Ֆրանսիայի երկրորդ Միրաբօն թռչում էր անդադար գաւառից-գաւառ և ժոլեգին ճարտասանութեամբ բոցավառում էր ունկնդիրներին։ „Պէտք չէ՛, հայրենակիցներ, որ Ֆրանսիական հանճարը խաւարէ ընդմիշտ և որ մեծ ազգը զիջանէ իր համաշխարհային դիրքը 500,000 զօրքի արշաւանքի առաջ... Երդւում ենք անսասան մնալ արհաւիրքի մէջ, երդւում ենք յետ չնահանջել և քանի դեռ կը մնայ մեր ոտքերի տակ մի փոքրիկ կտոր մեր սուրբ հողից, մենք մեր ձեռքում պինդ կը պահենք Ֆրանսիական Յեղափոխութեան յաղթապանծ դրօշը“... Նայնը շառաչում էր հզօր ելևէջներով և նրա հմայիչ ազդեցութեան տակ տասնեակ հազարաւոր հայրենասէրներ վազում էին ժողովրդային տրիբունի ետևից։ Հանդիսաւո՜ր վայրկեան. երբէք հայրենիքի բախտը այդքան անագորոյն խաղ չէր խաղացել...

Օր աւուր ստւարանում էր կամաւորների զօրքը և մաս-մաս դասաւորուում էր Պարիզի հիւսիսում ու արևելքում։ Կամաւորներ խումբ-խումբ գալիս էին նաև հարևան երկրներից։ Իտալիայից եկաւ Գարիբալդի փոքրիկ բանակով ու իր երկու որդիներով (Մենոտտի և Ռիչիոտտի) և ջարդ տուեց գերմանացիներին Դիժոն քաղաքում։ „Ազգային պաշտպանութեան“ բանակը կազմում էին մեծ մասամբ խիզախներ, անձնազոհութեան ընդունակ, բայց կռուի համար անվարժ, անդիսցիպլին։ Կռուում էին նրանք ոչ թէ յաղթելու յուսով, այլ միայն պարտքի զգացումից մղուած, այն սրբազան պարտքի, որ թելադրում էր ազգային պատիւը փրկելու անողոք անհրաժեշտութիւնը։ Մի քանի կէտերում քաջութեան հրաշքներ գործեց այդ խառնիճաղանճ բանակը։ Յիշատակելի է մանաւանդ Բելֆորի երկարատև, յամառ ու յուսահատ մաքառումը։ Բայց ֆրանսիացիների յաղթութիւնը կարճատև էր լինում, թշնամու քանակական առաւելութիւնը՝ ճնշող։ Եւ նա առաջ էր սլանում, արիւն ու արտասուք ցանելով. նա արագաքայլ մօտենում էր իր բաղձալի նպատակակէտին — Պարիզին։ Սեպտեմբերի վերջերում գերմանական զօրքի մի մասը շրջապատել էր արդէն հոյակապ մայրաքաղաքը և Պրուսիայի թագաւոր Վիլհելմ I իր զօրաբանակի կայանն էր հաստատել Վերսայլում։ Սկսեց այնուհետև չորս-ամսեայ յիշատակելի պաշարումը, որ յայտնի է պատմութեան մէջ իր աղեխարշ մանրամասնութիւններով։ Գաւառներում „ազգային պաշտպանութեան“ զօրքի մնացորդները շարունակում էին հերո-

սական դիմադրութիւնը: Դեկտեմբեր ամսում գերմանացիք սկսեցին ռմբակոծել Պարիզը: Ներսից պատասխանում էին նոյն որոտումներով... Բայց երկա՞ր կը տեւէր արդեօք... Յուսատու ոչինչ չկար, օգնութեան ձեռք — ոչ մի կողմից: Պարիզը՝ պաշարուած, լքուած գաւառներից և ամբողջ աշխարհից, ջարդուած բոլոր կէտերում՝ պիտի անձնատուր լինէր անխուսափելի կերպով: Սովը լրացրեց ամէն ինչ: Նոյեմբերի 20-ից եզ ու ոչխարի միս չկար այլեւս, և պաշարուածները ուտում էին ձի, կատու և ուրիշ կենդանիներ: Բայց այդ էլ սպառւում էր: Յունուարի 23-ին (1871) Ժիւլ Ֆերրի, արտաքին գործերի նախարարը, կորագլուխ դիմեց Վերսայլ թշնամու բանակը՝ զինադուլ խնդրելու: Ներսում „կռւող“ տարրերը ըմբոստացան. Գամբետտա՝ խրախուսուած հարաւային Ֆրանսիայի խանդավառ ցոյցերից՝ պահանջում էր կռիւ, անհաշտ, անդադրում, մինչև արեան վերջին կաթիլը... Մեծ հայրենասէրի ձայնը չլսւեց, և փետրուարի 26-ին Տիէր, գործադիր իշխանութեան գլուխը, Բիսմարկի հետ բանակցելով՝ սահմանեցին նախնական պայմանները խաղաղութեան, որ և ստորագրուեց մարտի 1-ին: Ֆրանսիան յանձնում էր Պրուսիային Էլզաս-Լոտարինգիան և պարտաւորւում էր վճարել հինգ միլիարդ պատերազմական տուգանք...

Կատարւե՜ց...

Թշնամու բանակը ցնծում էր հանդիսաւոր ու յաղթական տրամադրութեան մէջ: Ամբողջ միացեալ Գերմանիան էր խրախճանք կատարում: Բիսմարկ՝ դիւային ժպիտը երեսին՝ խաղում էր իր դժբախտ զոհի հետ, ինչպէս կատուն կը խաղայ իր ճանկերում գալարուող մկան հետ: Ամբողջ Եւրոպան սարսափով էր արտասանում ահեղ կամայապետի անունը: Ամբողջ Գերմանիան մի վայրենի խանդավառութեամբ բռնուած՝ խունկ էր ծխում արեան ու երկաթի ներկայացուցչին, և շովինիզմը լայն յորձանք տալով, խրոխտ ու ամբարտաւան՝ հնչեցնում էր քաղաքակրթուած աշխարհի դիմաց ատելի յանկերգը՝ Deutschland über alles!...

—

Ֆրանսիան հոգեվարքի մէջ էր: Մայրաքաղաք Պարիզը ծփում էր անսովոր ալէկոծութեան մէջ, ուռչում, փրփրում էր և իր ահարկու դղրդիւններով ուզում էր կարծէք սասանեցնել ամբողջ երկրագունդը: Այնտեղ կատարւում էր մի սարսափելի դրամա, որի նմանը երբէք չէր տեսնուած Պարիզի տարեգրութեան մէջ, նոյնիսկ Մեծ Յեղափոխութեան դիւցազնական օրերում: Բանւորները ապստամբել էին և տիրացել մայրաքաղաքին: „Կոմմունան“ էր, հռչակաւոր, անմոռանալի Կոմմունան, որ հայրենիքի օրհասական րոպէին կարմիր դրօշակը պարզելով, եկել էր բարձրաձայն աւետելու աշխարհին բոլոր տառապեալների վերջնական ազատումը քաղաքական ու սոցիալական անարգ գերութիւնից: Պարիզը մռնչում էր և թշւառ, հալածական մարդկութիւնը տիեզերքի բոլոր ծայրերից խուլ ձայնակցում էր նրա որոտումներին, մինչդեռ իշխող դասակարգերը և տիրանները բոլոր երկրներում մահու զարզանդով համակուած՝ ողբում էին արդէն կապիտալիզմի պայծառ արեգակի մօտալուտ խաւարումը...

Սեդանի ամօթալի կապիտուլացիան, Բազէնի դաւաճանութիւնը, յաղթուած հայրենիքի ծովածաւալ արիւնը, սովն ու արհաւիրքները և այդ բոլորից յետոյ կառավարութեան, իշխողների անարգ ստորացումը թշնամու առաջ... — Պարիզը տանէր այդքան անարգանք... Պարի՞զը, այդ ներվոտ, հրեղէն զանգուածը, այդ մշտաբորբոք հրաբուխը: Պէտք էր ըմբոստանալ ու յետ նուաճել իր դիրքը հայրենիքում և ամբողջ տիեզերքում: Եւ ահա 18 մարտ (1871) պատմական օրը, վաղ առաւօտեան, Պարիզը ապառազէն ոտքի կանգնեց „Կեցցէ՜ Կոմմունա“ որոտընդոստ աղաղակներով և կռիւ յայտարարեց Վերսայլ ապաստանած հայրենի կառավարութեան: Քաղաքացիական կռի՜ւ... Նա երկար տեւեց — ամբողջ երկու ամիս: Եւ երկու ամիս շարունակ ապստամբ „Կոմմունան“ կամ բանւոր դասակարգը տէր էր Պարիզին ու ամբողջ Ֆրանսիային. երկու ամիս շարունակ ընկերվարական կարմիր դրօշը ծածանւում էր Hôtel de Ville-ի բարձրութեան վրայ: Չտեսնուած օրեր էին: Մինչ Կոմմունայի անձնուէր գնդերը Պարիզի պարիսպներից կարկուտ էին թափում քաղաքը պաշարող թշնամու և ֆրանսիական պաշտօնական զօրքերի վրայ, — „կոմմունիստները“ ներսում՝ օրէնսդիր ու գործադիր իշխանութիւնները իրենց ձեռքը ձգած՝ տակն ու վրայ էին անում տիրող կարգերը, հոյակապ նախագիծ էին մշակում ամբողջ Ֆրանսիայի յեղաշրջման՝ ընկերվարական, կոմմունիստական խարիսխների վրայ: Կոմմունայի անդամների մեծամասնութիւնը բլանկիստներ էին, հռչակաւոր Բլանկիի հետեւողներ. փոքրամասնութիւնը՝ պրուդոնիստներ և մարքսիստներ — „Միջազգային Բանւորական Դաշնակցութեան“ անդամներ: Համերաշխութիւնը կատարեալ էր: Սոցիալիստական կառավարութեան առաջին գործը եղաւ վերացնել մշտական զօրքը և զինուորութեան հրաւիրել բոլոր ֆրանսիական քաղաքացիներին: Դրանից յետոյ նա մի հրամանագրով բաժանեց եկեղեցին պետութիւնից և ջնջեց այն բոլոր ծախքերը, որ սահմանուած էին կրօնական նպատակների համար: Կրօնը անհատական խղճի գործ հրատարակուեց և կրօնաւորների կայքը ժողովրդին յանձնուեց: Դպրոցական գործը ազատուեց եկեղեցու ու պետութեան ազդեցութիւնից և ուսումը ձրի հռչակուեց ժողովրդային բոլոր խաւերի համար: Գիյոտինը, մահուան այդ սոսկալի գործիքը, հրապարակ հանուեց և ժողովրդի ընդհանուր ցնծութեան մէջ կրակի մատնուեց: Վանդօմ հրապարակի վրայ 1809-ի Նապոլէոնեան պատերազմի թնդանօթներից ձուլուած յաղթական կամարը հանդիսաւոր կերպով ոչնչացրուեց նոյնպէս. „Կոմմունայի դրօշը համաշխարհային հանրապետութեան դրօշն էր“ և չէր կարող հանդուրժել, որ իր թագաւորութեան մէջ կանգուն մնար այդպիսի մի արձան, որ խորհրդանշան էր շովինիզմի, վայրենի ուժի և ազգերի ատելութեան:

Քաղաքական, զինուորական խորունկ յեղաշրջումների հետ զուգընթացաբար կատարւում էր տնտեսական յեղաշրջումը: Ապրիլի 16-ին Կոմմունայի կառավարութիւնը հրահանգեց մշակել մի յատակագիծ, որի համեմատ պարիզեան բոլոր գործարանները, արդիւնաբերութեան բոլոր ճիւղերը դրւում էին բանւորների տրամադրութեան տակ՝ ընկերակցական (կօօպերատիվ) կազմակերպութիւնների հողի վրայ...

Ապագայ մարդկային հասարակութեան արշալոյսն էր դա, որ ծագեց այդքան անակնկալ կերպով Պարիզի աւերակների վրայ, վայրկենաբար լուսաւորեց բնակալութեան ճանկերում հեծեծող մարդկութեան խարխափող

գիտակցութիւնը և ապա... մարեց: Նա վաղաժամ էր:

Պարիզը երկար չէր կարող դիմադրել, նրան անընդհատ ռմբակոծում էին. և ռմբակոծողը—ո՜րպիսի հեգնութիւն — այժմ ֆրանսիական կառավարութիւնն էր, Պարիզից մերժուած, վտարուած կառավարութիւնը, որը երդուել էր ամէն միջոցի դիմել, նոյնիսկ Բիսմարկի օգնութիւնը հայցել, միայն թէ յաղթահարէր „Կոմմունիզմի“ սարսափեցնող ուրուականը: Մեցի ու Սեդանի մարտադաշտերից Բիսմարկի յօժարութեամբ յետ կանչեցին գերի բռնուած ֆրանսիական գնդերը և թափեցին նրանց մայրաքաղաքի վրայ: Երկու ամիս զարմանալի տոկունութեամբ Պարիզը մղեց մահուան պայքարը, բայց իվերջոյ Վերսալլի ուժերը գերակշռեցին. Պարիզն ընկաւ... „Տիեզերական հանրապետութեան“ ռահվիրանները վերջին յուսահատ ճակատամարտը տուին Մօնմարտրի ու Բելվիլի բարձունքների վրայ և զէնքը ձեռին ընկան գնդակահար, արիւնաշաղաղ բարրիկադների տակ...

Վերսալլի զօրքերը յաղթական ուռա՜ներով ներս արշաւեցին և կազմակերպուեց մի անօրինակ, մի սարսափելի ջարդ. Պարիզը դարձաւ մարդկային սպանդանոց: Կոտորում էին յեղափոխականներին, հարիւրներով, հազարներով կապում՝ էին իրարից և հրացանի բռնում. ծեր, կին, մանուկ—չէին խնայւում: Մի ամբողջ շաբաթ տևեց խողխողման այդ գազանային արարողութիւնը. ռէակցիան՝ խելակորոյս, անզուսպ ու վայրագ ատելութեամբ լցուած՝ ծծում էր իր հարազատների արիւնը, այն չնաշխարհիկ հոգիների, որոնք եկել էին բռնակալութեան փլատակների վրայ պատուաստելու վերջապէս մարդկային ճշմարիտ ազատագրութեան գաղափարը... Պարիզը ընկաւ իսպառ արիւնաքամ, դիակնացած: 25,000 այր, կին, երեխայ կռւի մէջ կոտորուեցին կամ կռւից յետոյ խողխողուեցին: Մօտ 3,000 բանտերում՝ հիւծուեցին, մեռան: Մօտ 14,000 դատապարտուեցին ցմահ աքսորի և գնացին լցնելու Նոր-Կալէդօնեայի արևակէզ խորշերը: Մօտ 70,000 դուրս քշուեցին հայրենիքից և ապաստանեցին Զուիցերիայի ու Մեծ-Բրիտանիայի հիւրընկալ վայրերը, ուր երկար տարիներ ողբացին իրենց սև ճակատագիրը, մատնուած ի սաստ բախտի և կեանքի ալիքների...

Այդպէս վրէժխնդիր եղաւ բուրժուազական նէմեզիդան: Երբէք նա այնքան անսիրտ չէր եղել, նոյնիսկ 1848-ի „Յունիսեան օրերին“: Երբէք պրօլետարիատ և բուրժուազիա այդքան մոլեգնութեամբ չէին բախուել իրար. երբէք անդունդը երկու հակամարտ դասակարգերի միջև չէր բացուել այդքան խոր, անանցանելի:

„Արիւնոտ շաբաթ“... այդպէս է կոչւում մասսային ջարդերի այդ տխուր շրջանը ֆրանսիական պատմութեան մէջ: Նա արձանագրուած է արեան տառերով: Կարո՞ղ է արդեօք պրօլետարիատը մոռանալ այդ օրերը... կարո՞ղ է նա արդեօք անդրադառնալ սև շրջանի վրայ առանց վրէժի ու ատելութեան թոյնը սնուցանելու իր մէջ... Ամէն տարի, արիւնոտ շաբաթւայ այդ տարեդարձին, դուք կը տեսնէք բանւորական ստուար լէգիոններ՝ իրենց շէֆերի ուղեկցութեամբ, դրօշակներով ու ծաղկեայ պսակներով՝ ծանրաքայլ դիմում են „Պէր Լաշէզի“ գերեզմանատուն՝ յարգելու այնտեղ հանգչող „կոմմունարների“ յիշատակը և... երդուելու նրանց շիրիմների վրայ — երդում՝ յեղափոխութեան ու համերաշխութեան, երդում՝ հաւատարիմ մնալու Կոմմունայի պարզած դրօշակին և պատրաստ գտնուելու այն վսեմ ու ահաւոր վայրկեանին, երբ „գալլիական աքլորի կանչը կ'ազդարարէ աշխարհին սօցիալական ահեղագոյն կատաստրօֆի ժայթքումը“...

# ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## „LES CHRÉTIENS ET LES MUSULMANS“

### *par L. CONTENSON*

### „ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐ ԵՒ ՄԱՀՄԵՏԱԿԱՆՆԵՐ“

Լուդօվիկ Կօնտանսօնի

Հայասէր տենդենցիան կարմիր գծով անցնում է Լուդօվիկ Կօնտանսօնի ամբողջ գրուածքի միջից: Հեղինակը սովորական կօմպիլիատօր չէ, այլ խուզարկու ճանապարհորդ, լուրջ գիտական պատրաստականութեամբ: Նրա հայասիրութիւնը կանխակալ մի կարծիք չէ, այլ հետևանք հայկական իրականութեան խորունկ ուսումնասիրութեան: Վճիտ, սրտառուչ լեզուով պատկերացնում է նա Հայաստանի արհաւիրքները, նշաւակում է նրա պատասխանատու հեղինակներին: Երգում է անառիկ Զէյթունը իր առիւծ զաւակներով ու պարբերական ընդվզումներով: Նկարագրում է այն ահ ու սարսափը, որ ներշնչում է Զէյթունի անունը ամբողջ Փոքր Հայքի մահմէդականներին: Ողբում է հայութեան լքուած վիճակը և հռչակում է հայ տարրի անժխտելի առաւելութիւնները, նրա մտաւոր ու կուլտուրական գերազանցութիւնը Օսմանեան կայսրութեան այլազան ցեղերի Բաբէլօնում:

Թիւրք տարրը ներկայանում է նրան, իբրև արգահատանքի արժանի մի ոչնչութիւն, զուրկ ռևէ նախաձեռնութիւնից, ամէն բան ի վերուստ սպասող, անտարբեր թէ՛ դէպի բարին, թէ՛ դէպի չարը: Մահմէդական բազմահռչակ „ֆանատիկոսութիւնը“ թւում է նրան չափազանցրած. հայկական ջարդերի մէջ նրա դերը չնչին է՝ ըստ հեղինակի:

Ջարդերի պատճա՞ռը...

Այդ չարատանջ ու տակաւին այժմէութիւն ունեցող պրօբլէմը, որ այնքան թունաւորեց հայի գիտակցութիւնը վերջին տարիներում, կրքերը յուզելով ու հակայեղափոխական ռէակցիան զօրացնելով -- ի՞նչպէս է արդեօք լուծում նրան եւրոպացի Կօնտանսօն...

Այնպէս, ինչպէս շատ ուրիշ եւրոպացիներ, որոնք աշխատել են փոքր ինչ խոր թափանցել հայ ճգնաժամի ուսումնասիրութեան մէջ:

Հեղինակը բերում է այդ առթիւ մի թիւրք սպայի խորհրդածութիւնները (եր. 62), որ աւելորդ չենք սեպում կրկնել „Դրօշակում“,—այնքան ուշագրաւ է նա հայ „քաղաքագէտների“ ֆրազամոլ բացականչութիւնների դիմաց:

«Քսանուհինգ տարի սրանից առաջ—ասում է ծերունի թիւրք սպան—ես նախատեսնում էի արդէն այն՝ ինչ կատարուեց: Ես դիտում էի, թէ ինչպէս ամերիկական միսիօնարները հաստատւում էին մեր երկրում եւ երիտասարդ հայերը՝ նրանց դպրոցներում ուսանելով, վարակւում էին նոր գաղափարներով: Ուրիշ հայ երիտասարդներ էլ՝ իրենց ուսումն աւարտելով, գալիս էին Եւրոպայից: Երբ պառաւ Թիւրքիայի նրանների մէջ

սկսեցին ներս սպրդել այդ կեղծ-եւրոպական տարրերը, ես հասկացայ, որ ինչ որ վտանգաւոր բան է պատրաստւում։ Մենք երջանիկ էինք, հանգիստ. մենք ապրում էինք արեւելեան կեանքով, մեր հինաւուրց զեղծումներով, որոնք մեր ուղ ու ծուծն են դարձել... Մեր սուլթանները խոստանում էին ռէֆորմներ եւ երբէք չէին կիրառում մեր սովորութիւնները չխախտելու համար...

«Որքա՜ն նախանձելի էր մեր վիճակը, երբ մեր երկրում կային միայն տեղացի երկչոտ քրիստոնեաներ, որոնք բնաւ չէին մտածում փոխ առնել ձեր արեւմտեան գաղափարները... Կարո՞ղ էք երեւակայել, մի օր Խարբերդում տեսայ չորս նորեկ հայ երիտասարդներ եւրոպական նոր ձեւի գլխարկներով, որ ձեր հիւպատոսներն են հագնում։ Նրանք գալիս էին ոչ թէ Պարիզից կամ Լոնդոնից, այլ պարզապէս Այնթափի ամերիկական բժշկական վարժարանից։ Նրանք աւելի հպարտ էին երեւում, քան դեսպանները... Եւ ահա ամէնքն սկսեցին խօսել ինքնավարութեան, անկախութեան մասին ու պահանջել, որ առելի թիւրքը դուրս քշւի հայկական հայրենիքից։ Հասկանալի է, որ այդ բոլորը չէր կարող անցնել առանց ընդհարման, առանց ջնջումների»...

„Այո՛, անշուշտ, սիրելի էֆէնտի,—պատասխանում է Կոնստանսօնը ծերունի սպային — անխուսափելի էր արդարեւ, որ մի օր պիտի գար, երբ մեր արեւմտեան գաղափարները երեւան կըգային մինչեւ իսկ Թիւրք կայսրութեան մէջ, ուր քրիստոնեայ ազգերը աւելի պատրաստ պիտի գտնէին ընդունելու առաջադիմութեան օրէնքը, մարսելու եւրոպական քաղաքակրթութիւնը, որը յաղթական կերպով առաջ է գնում ամենուրեք և որին անզօր է դիմադրելու զառամեալ իսլամը։ Ամերիկական միսիօնարները չեն պատճառը, այլ միայն շարժման որոշ փազիսը, որ պիտի առաջանար ճակատագրական կերպով։ Խնդիրը չի կարող վիճաբանութեան դրւիլ դիւանագէտների նախասենեակներում, ինչպէս որ վիճաբանութեան չէր դրւում Ֆրանսիական Յեղափոխութեան շարժումը։ Արդէն Բալկանների վրայ երիտասարդ ազգութիւններ նւաճել էին իրենց ազատութիւնը։ Ցաւ, որ ասիական Թիւրքիայում Հայը, իբրեւ աւելի բազմաթիւ, աւելի դիմացկուն ու խելացի և աւելի հպարտ, կոչւեցաւ տանելու գլխաւոր ծանրութիւնը մի կռւի, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ կռիւ քաղաքակրթութեան՝ ընդդէմ բարբարոսութեան։ Արիւնալից կոտորածները արգելք եղան նրան, բայց կռիւը պէտք է շարունակւի անդուլ ու անագորոյն...

„Սոսկ իրերի տրամաբանութիւնը ուսուցանում է մեզ, որ մի ահեղ ճայթիւն անխուսափելի կերպով պիտի առաջ գար ասիական Թիւրքիայում, հէնց որ ամենակարօտի և ամենաօժտւած ժողովուրդը այդ երկրում վարակւէր նոր գաղափարների հոսանքով ու նրանց հետ օղակւորւած անհամար պահանջներով... Եւ այդ ճայթիւնը առաջ եկաւ ապշեցուցիչ չափերով (եր. 111)։

„Սակայն —ասում է հեղինակը (եր. 147)—փորձել ջնջել հայկական հարցը՝ հայ ազգութիւնը ոչնչացնելով, դա վեր է մի կառավարութեան ուժերից և մանաւանդ մի այսպէս տաճիկ կառավարութեան... Հայկական խնդիրը պիտի յարատեւէ, քանի դեռ կապրեն հայ անուն կրող անհատներ, և նա դեռ աւելի եւս սուր կերպարանք կըստանայ մեր ժամանակում, ուր իւրաքանչիւր ժողովուրդ մամուլի, գրքերի ու գրականութեան օգնութեամբ հասնում է ինքնագիտակցութեան և պահանջում է իր բաժին ա զ ա տ ո ւ թ ի ւ ն ը“...

Գրքին կցւած է հայասէր ակադեմիկոս Ժիւլ Լըմէտրի առաջաբանը, որ գրեթէ ամբողջապէս նւիրւած է հայկական հարցին։ „Ողջ Ֆրանսիան – ասում է նա—պիտի յուզւէր այդ հետաքրքիր ժողովրդի վիճակով, որը կռւում է յանուն ազատութեան թիւրք կայսրութեան դէմ, ինչպէս որ բօյէրներն են կռւում՝ ընդդէմ անգլիական իմպերիալիզմի“։

Այդպիսով գրքի ընդհանուր բովանդակութիւնը այնքան յափշտակիչ է և խրախուսող, որ, հասկանալի է, մենք չենք կարող կանգ առնել ո՛չ առաջաբանում մի շարք մեծանուն և մեծահոգի ֆրանսիացիների հասցէին ուղղած արհամարհանքի և ո՛չ էլ գրքի մէջ յարգելի հեղինակի մի քանի թռուցիկ ակնարկների վրայ հայ յեղափոխականների մասին։

## Թ Ե Ր Թ Օ Ն

### ՊՈՒԼԿԱՐԻՈՅ
### ԱՊՐԻԼԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

(ՔՍԱՆՀԻՆԳԱՄԵԱՅ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ)

(Շարունակութիւն. — Տես № 3)

—

Դառնանք Բանակիւրիշթէ, ուր դէպքերը կըսպասեն։

Պէնքօվսքիի մեկնելէն յետոյ («զինւորական խորհուրդը») զինքը («Սրէտնա-Կօրայի առժամանակեայ զուլկար կառավարութիւն») յայտարարեց եւ այս խորագրով կնիք մը շինել տուաւ։

Թաթար-Բազարճըքի, Ֆիլիպպէի, Սօֆիայի, Խասքէի եւ Պօլսոյ թիւրք իշխանութիւնները Բանակիւրիշթէի ապստամբութեան յայտարարուիլը տեղեկացած էին։ Ֆիլիպպէի միւթէսարիֆը՝ 200 ձիաւոր առած եւ քանի մը թիւրք ու պուլկար ջօջեր հետը՝ Բանակիւրիշթէ ճանապարհ ինկաւ ապստամբութեան առաջքն առնելու։ Բայց դեռ Բանակիւրիշթէի չհասած՝ թրքաբնակ գիւղի մը մէջ մանրամասն լուրեր առնելով՝ սիրտ չէր ըներ աւելի առաջ քալելու։ Միւթէսարիֆը Խասքէէն եւ Պօլսէն հրահանգի կըսպասէր։ Հազիւ երկու օր յետոյ կ'որոշւի 1,000 զինւոր ուղարկել Թնդանօթաձիգ Հաֆըզ փաշայի հրամանատարութեամբ։ Փաշան՝ Սթրէլջա գիւղը հասնելով եւ տեղւոյն ու գիւղին վրայ լուրջ ուսումնասիրութիւն մը ընելով, Ֆիլիպպէէն 2,000 հոգի եւս կը պահանջէ, մինչդեռ 3,000 հետեւակ եւ 600 ձիաւոր զօրք կուղարկւի Ատիլ եւ Սէլեամի փաշաների առաջնորդութեամբ։ Փաշաները կարճ բանակցութենէ յետոյ խաղաղ միջոցներով կուզեն ապստամբութեան առաջը առնել եւ երկու անգամ նամակով կառաջարկեն որ ապստամբները զէնքերնին յանձնեն եւ ամէն մարդ իր գործին նայի։ Սակայն «Առժամանակեայ կառավարութիւնը» ասոր ոչինչ կը պատասխանէ։ Պօպէքօվ նամակները կը պատռէ եւ 200 հոգիով Սթրէլջայի դիրքի ամրութիւններուն պաշտպանութիւնը ձեռք կառնէ՝ յիշեցնելով իր զինւորներուն. «Մենք մեր դուռը բռնած թշնամիին դէմ կելլենք. չկարծէք որ հարամիք կերթանք, հայրենիքի համար է որ պիտի մեռնինք»։

Բանակիւրիշթէն հարաւէն ու արեւելքէն 4,000 կանոնաւոր թիւրք զօրքերէ պաշարւած էր։ Ապրիլ 26-ին, Սթրէլջայի դիրքի մօտ, առաջին հրացանաձգութիւնը սկսաւ։ Կռիւը երկար չտեւեց. թիւրքերը Սթրէլջա վերադարձան, ապստամբներն ալ Բանակիւրիշթէ եկան, որովհետեւ հեղեղանման անձրեւ մը սկսեր էր տեղալ։ Առաւօտեան, ապրիլ 27-ին, Սօքօլօվ 300 հոգիով կը հասնի նոյն դիրքերու վրայ, ու անդադրում հրացանաձգութիւն մը կըսկսւի երկու կողմէն։ Թիւրքերը երիկուան դէմ կը քաշւին, յաջողելով ապստամբներէն գիւղացի մը ձերբակալել։ Կ'ենթադրւի որ այս գիւղա-

ցին խմացուցած ըլլայ Թիւրքերուն թէ ապստամբներուն մէջ ոչ ռուս կայ եւ ոչ ալ սերպ, վանզի, մինչդեռ Թիւրքերը մինչեւ այդ ատենը չատ զգոյշ էին եւ վճռական ընդհարումներէ կը խուսափէին, ապրիլ 28-ին մոլեգնոտ յարձակումներով չորս կողմէն խուժեցին Զերէչքա գետի դիրքը պաշտպանողներուն վրայ եւ ստիպեցին անոնց քաշուիլ Բանակիւրիւշթէի դիրքերը — Պալապանովի անտառը։ Հոդ է, որ ապրիլ 29-ին արիւնահեղ կռիւ մը տեղի կունենայ։ Մօտ 2,000 կանոնաւոր զօրք անտառը մտնել կուզէ, իսկ 800-700 հոգի լաւ դիրքեր բռնած՝ կը պաշտպանեն եւ զօրաւոր ընդդիմութիւն մը ցոյց կուտան։ Սակայն վերջիվերջոյ պաշտպանողները կը հարկադրուին իրենց դիրքերը թողուլ, որովհետեւ անհելլի ուժի առաջ՝ ալ անկարող էին դէմ դնելու։ Ապրիլ 30-ին պուլկարները Բանակիւրիւշթէի շրջակայ բլուրներու նախապէս պատրաստուած բարձր ամրութիւններու վրայ կը հաստատուին, ուր էին նաեւ պատմական փայտի թնդանօթները։ Սակայն Թիւրքերը միեւնոյն յանդուգն խուժանքները հօս եւս կրկնեցին, ալ առանց վախի, մինչեւ իսկ արհամարհելով այդ անակնկալ դիմադրութիւնը, որովհետեւ ալ համոզուած էին որ միայն բուլղարներու հետ գործ ունին։

Թիւրքերը բոլոր ամրութիւնները, պատնէշները իրարու ետեւէ գրաւեցին եւ անթափանցելի զինուորական օղակ մը կազմած՝ չորս կողմէն Բանակիւրիւշթէն պաշարեցին։ Մի անգամ եւս ապստամբական ոգին պէտք է գլուխ խոնարհէր վիթխարի ուժին առաջ։ Եւ 1876 ապրիլ 30-ին Թիւրքերը Բանակիւրիւշթէի երեք կողմէն ներս մտան ճիչդ կէսօրէն յետոյ եւ Բանակիւրիւշթէի տասնօրեայ քաղաքական անկախութեան վերջ դրին։ Սթրէյջայի դիրքի եւ Պալապանովի անտառի մօտերը 200-ի չափ Թիւրք սպանուածներ գտնուեցան, մեծ մասը կանոնաւոր զօրքերէ, իսկ Բանակիւրիւշթէի շուրջը՝ մօտ 100։ Բոլոր բաղխումներու մէջ ապստամբներէն հազիւ 100 հոգի միայն ընկան։ Կռուի ժամանակ Թիւրք զինուորներուն կ'օգնէին շրջակայքի բաշիբոզուկները, չէրքէզները, գնչուները եւ պոմաքները։

Քաղաքէն նահանջելու ժամանակ ապստամբութեան գլխաւոր ղեկավարները բնակիչներու մասին ալ հոգացին. քաջ ու յանդուգն հարուածներու օգնութեամբ քաղաքի բոլոր բնակիչները անտեսանելի տեղերէ փախցուցին լեռը ու մէկն ալ զէնքը ձեռքին գերի չինկաւ։ Քաղաքը մնացին այնպիսի մարդիկ, որոնք անկարող էին փախչելու, — ծերերը, հիւանդները, կիները ու տղաները, որոնք յետոյ Թիւրքերէն մորթուեցան։ Ամենէն վերջը «Առժամանակեայ կառավարութեան» անդամները հեռացան։

Թիւրքերը տիրելով քաղաքին՝ սկսան իրենց սովորական բարբարոսութիւնները։ Գիշեր-ցերեկ փաշաները ու սպաները աններելի կեղտոտ գազանութիւններ կընէին։ Թնդանօթաձիգ զօրքերն ալ՝ շրջակայ բլուրներէն ամբողջ քաղաքը ռմբակոծելէն ու մոխիր դարձնելէն յետոյ, խուժեցին քաղաքը՝ թալանելու ու կողոպտելու։ Թալանէն յետոյ սկսան հրդեհել տուները, խանութները եւ մթերանոցները. ամբողջ չուկան կրակի տուին։ Քաղաքի էն նշանաւոր շէնքերը, մօտ 400, եւ էն գեղեցիկները՝ այրուեցան։ Եկեղեցիները թնդանօթի ռումբերով փլատակներ դարձնելով՝ բոլոր արծաթեայ ու ոսկեհուռ սպասները յափշտակեցին. անլուր բռնաբարութիւններ ի գործ դրին, եկեղեցիներուն մէջ ապաստանած ժողովուրդը տանջեցին, չատերը մարտիրոսաբար սպանեցին, նոյնիսկ 80-90 տարեկան ծերունիներ։ Այդ գազանութիւնները մինչեւ 3 մայիս տեւեցին, իսկ կրակը մինչեւ 7 մայիս շարունակուեցաւ։ Ամբողջ սպանուածները եղան 384 հոգի արական սեռէ եւ 154 իգական սեռէ... Կառավարութիւնը կոտորածէն, կողոպուտէն ու տանջանքներէն զատ՝ 4,000 ոսկի ալ արտասովոր տուգանք պահանջեց քաղաքէն։

Այդ ժամանակներն էր, որ օտարականները, ինչպէս եւ Թղթակիցները, սկսան փոքր առ փոքր քաղաքը այցելել, տեղեկութիւններ հաւաքել, ուսումնասիրել կացութիւնը եւ վտանգուածներուն ու աղքատներուն օգնութիւններ տալ։ Կառավարութեան զրկած քննիչ յանձնաժողովը տեղեկագիր մը ուղարկեց մեծ վեզիրին, որի արդիւնքն այն եղաւ, որ Հաֆըզ-փաշան — Բանակիւրիւշթէյի արիւնոտ դէպքերու հեղինակը — ոստիկանութեան նախարարի պաշտօնի կանչուեցաւ...

Ապրիլեան շարժումներու արիւնալի տրամը կատարեալ ըլլալու համար, երկրորդ յեղափոխական նահանգի (Ֆիլիպպէի) ապստամբութեան կազմակերպիչները ու ղեկավարները պաշիբոզուկներու ու կանոնաւոր զօրքերու ձեռքով թափուած այնքան անմեղ արեան գինը իրենց գլուխներով տուժեցին։ Պէնքօվսքիի մարմինը Թէթէվէնի Պալքանը մնաց, իսկ գլուխը ձիու տոպրակի մէջ դրուած՝ Սօֆիայի քօնաքը բերին եւ հոն չօրերուն ցոյց տուին. Վօլօվ եւ Իքօնոմով հալածական՝ Եանթրա գետի ալիքներէն խեղդուեցան, որոնց դիակները Պելա գիւղի շուներէն փարատուած գտնուեցան եւ Թօտոր Քապլէշքօվը, առաջին ապստամբութեան գլխաւոր յանցաւորը, Կապրօվայի բանտին մէջ զարթիէի ատրճանակով անձնասպան եղաւ։

Աւելորդ չենք համարիր հոս բերել քանի մը մանրամասնութիւններ այդ ղեկավարների եղերական վախճանի մասին։

Պէնքօվսքին, որ այնքան հպարտ ապրիլ 27-ին Պէլօվա մտաւ, Թռուցիկ ատպատախումբի մը գլուխ անցած, իրեն հետ ունենալով խումբին խաչակիր Քիրիլ վանականը, մայիս 7-ին գլուխը քարչ արած, ուժաթափ ոտքերով Թէթէվէնի վայրենի Պալքանի մէջտեղը գտնուող Սեւ ժայռը ուղղուեցաւ։ Նա ճամբան ընկերներուն կ'ըսէր. «կուզէք դժոխքը տարէք զիս, աշխարհը ինձ համար գոյութիւն չունի»։ Խումբին ուղղեցոյցն էր հօտաղ Պայ-Սթանչօն, որու հետ եկան Սեւ-ժայռը եւ արջի մը որջը պահուտեցան։ Պայ-Սթանչօն պէտք եղած զգուշութիւնները յիշեցնելէն յետոյ դէպի Թէթէվէն գնաց, որ ուտելիք ու ծպտելու հագուստ բերէ։ Սակայն Թէթէվէնի Թիւրքերը Պայ-Սթանչօն կը ձերբակալեն եւ Սեւ-ժայռի մօտերը կը բերեն, որ վօյվօտային ուր պահուած ըլլալը ցնէ։ Պայ-Սթանչօն տանջանքներուն չդիմանալով կամուրջէն ինքզինքը վար գետը կը նետէ եւ գանկը կը ջարդէ։ Այսպիսի անման անձնուիրութիւն մը հասարակ ու տգէտ հօտաղէ մը — պուլկար յեղափոխականի մը կեանքը փրկելու համար — պուլկար ամբողջ յեղափոխական պատմութեան մէջ մէկ պատկեր մը է։

Փախստականները Պայ-Սթանչօյին մարտիրոսական մահէն բոլորովին անգիտակ, անոր ուչանալը տարբեր կերպով կը մեկնեն եւ որպէսզի դաւաճանութեան ծուղակի մէջ չ'իյնան, կ'որոշեն տեղերնին փոխել եւ քարայրէն ելլելով կ'սկսին այդ լայնատարած Թէթէվէնի Պալքանի մէջ երկարօրէն դեգերիլ. վերջապէս փոքրիկ հիւղակ մը կը նկատեն, ուր երեք հօտարածներ զիրենք կը դիմաւորեն։ Հօտաղներէն մին, Պայ-Նեեռ, խօսք կու տայ զանոնք ապահով ու անվտանգ Թէթէվէն հասցնել, բայց որոշ տեղ մը զանոնք առաջնորդելէ յետոյ՝ մի ուրիշ հօտաղի կը յանձնէ։

Պայ-Նեեռն իր Թանկագին հիւրերը Պայ-Վըլեւ Մէջքաթային (արջ) կը յանձնէ գաղտնի ու խորհրդաւոր նշաններ ընելով, եւ յետոյ իր փարախի ճամբան կը բռնէ, իսկ աս վերջինը՝ կեղծ ուրախութեամբ իր ընկերոջ բարեկամները ընդունելով, կը խոստանայ անոնց ողջառողջ ազատելուն հոգալ։

Մայիս 11-ն էր։ Հայր Քիրիլ մաղթանք կատարեց Թէթէվէնի անթափանց անտառային խորոչին մէջ, մինչդեռ աս ատենները Պայ-Վըլեւ Մէջքաթան եւ Պայ-Նեեռ Լիսիցաթա (աղուէս) սակարկութիւն կ'ընէին Թիւրք կառավարութեան հետ Պէնքօվսքի վօյվօտային գլուխին համար։

Սակարկութիւնը կըլլայ եւ դաւաճանութեան յատակագիծը կ'որոշուի. Ամինարքա գետի ծուղակը պատրաստելով՝ լայնալանջ ու Թինկուէս ուժեղ պօմաքներ լեցուն չիչանաներով Պէնքօվսքիին անցնելուն կըսպասեն ճակատագրական կամուրջի մը վրայ։

Ահա ինչպէս Զ. Սթօյանօվը՝ Պէնքօվսքիին ընկերակցողը, սպանութեան տխուր պատկերը կը նկարագրէ.

— Եթէ Աստուած տայ, մինչեւ իրիկնամուտ աս բլուրը կանցնինք, ըսաւ Պայ-Վըլխիւ. հայտէ՛, հիմակ շուտ-շուտ քալենք. զիրար բռնեցէք, որ կամուրջէն չիյնաք, եւ ալ մի վախնաք։

Իրարու ետեւէ շարուած, նախ մեր բարերարը, յետոյ մենք կամուրջին վրայ ոտք դրինք։ Ես ետեւնէն կերթայի։ Գետը խոր չէր, բայց շատ արագընթաց էր։ Մեր անցած տեղէն՝ խիտ անտառը մեր գլխուն վերեւ սաղարթապատ ճիւղերէ անթափանցելի կամար կը կազմէր։ Մեր բարերարը ու Պէնքօվսքին արդէն դիմացի ափն էին, իսկ մենք երեքնիս — հայր Քիրիլը, Ստէֆօն եւ ես — դեռ կամուրջի վրան էինք։ Ընդհանուր լռութեան մէջ ես բերանս բացի, երբ նկատեցի որ գետի աջ կողմը այնպիսի երեւոյթներ կը տեսնուէին, որ յայտնի կըլլար կամուրջին նոր շինուիլը, որուն վրայ ուզեցի ընկերներուս ուշադրութիւնը հրաւիրել։

— Դու պէտք է գիտնաս որ Փիլիպպէ չենք գտնուիր, Մարիցայի կամուրջի վրայ, այլ Թէթէվէնի Պալքանը — Քօսթէնա գետի վրայ, պատասխանեց Պէնքօվսքին եւ ետեւը դարձաւ։ Աս իր մնաս·բարովն էր . . եւ իր վերջին խօսքերն եղան միանգամայն։

Իր խօսքը հազիւ լմնցուցած, Վըլխիւ աղբարը, մեր բարերարը, անձնուէր ու հաւատարիմ Վըլեխին, որ իրեն հայր կը կանչէինք, նշմարեցի որ հողի վրայ չորքոտանիի պէս սողալով, գնաց գլորած հաստ-հաստ ծառի քամակը ալքեցաւ։ Գործը ինչ բան ըլլալը ես չկրցայ իմանալ եւ չեմ կարծեր որ ընկերներս ալ իմացած ըլլան։ Հարցնելու պատրաստուած ժամանակս — թէ ինչո՞ւ ծերուկը գետնի վրայ գլորուեց, բերանս կղպուեցաւ եւ լեզուս կոկորդիս մէջ չորցաւ։

Քանի մը աւելի հրացաններ գետի երկու կողմէն ալ որոտընդոստ գոռացին եւ գնդակները մեղուներու պէս մեր վրայ խուժեցին. . .

. . . . Սպանողները՝ իսկոյն Թաքստոցէն ելնալով, Պէնքօվսքիի գլուխը կտրեցին եւ դիակը Սվինարքայի թուփերուն մէջ նետելով, գլուխը յաղթանակով Թէթէվէն տարան։

Խումբէն միայն վանական հայր Քիրիլը կենդանի ձերբակալուեցաւ, իսկ Զահարի Սթօյանօվը եւ Սթէֆօ դալմատեցին կարողացան իրենց անձը ճողոպրել։ Հայր Քիրիլը, Սօֆօթ ծնած, որ Լէվսքիի համազօր դեր կատարած է պուլկար յեղափոխութեան մէջ, արտակարգ դատարանէն ցկեանս շղթայակիր բանտարկութեան դատապարտուեցաւ իբրեւ քօմիթէին բաշ րէիսի, բայց բանտին մէջ հիւանդանալով՝ մեռաւ 15 ապրիլին 1877։ Հայր Քիրիլին հետ բանտարկուած էր նաեւ Սթօյան Զախօվը, պուլկար յեղափոխական կեդրոնական կօմիտէի հիմնադիրներէն մին, որ յետոյ ներման արժանացաւ։

(Շարունակելի)

## Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ւ Ն

**ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ** ստացած է՝

ՄԻՒՆԽԷՆԷՆ 71 ֆրանք 40 սանթ., ՊԱՏԵՐՍՕՆԷՆ, Զօլ.-ի միջոցով, Հայկ Գնունի 2 դօլ., Շամիրամ 1, Գեղամ 50 սէնթ.— ընդամէնը 18 ֆրանք։ ԸՔՍ-ԱՆ-ՊՐՕՎԱՆՍԷՆ, Բ. Ցա.-ի միջոցով, 6 ֆր., ՈՍԿԱՆԱՊԱՏԷՆ՝ „Կռունկ" խմբէն 399 ֆր. (150 ռ.), ՔՕՆՍՏԱՆԶԱՅԷՆ՝ Առիւծէն 20 ֆրանք։ Գումար 514 ֆրանք 40 սանթիմ։

**ԲԵՐԴԻ** Կօմիտէն՝

Հնչակեաններէ 152 ղահեկան, Խոսրովէ 38, „Ալառամ" խ. 27, Գրիշէ 9 եւ 1 2, Կամսարէ 8։ Գումար 234 եւ 1 2 ղահեկան։

**ՆԱԻԱՀԱՆԳՍՏԻ** Կեդր. Կօմիտէն՝

ԴԱՇՏԷՆ 100 ռուբլի, Կարմիր քաղաքէն Մ.-ի ձեռքով 100 ռ.։ Գումար 200 ռուբլի։

**ՊԱԼՔԱՆԵԱՆ** Առժամանակեայ Կեդր. Կօմիտէն՝

ՄԱԿԵԴՈՆ կօմիտէէն՝ „Շաքէյի հայուհեաց" խ. (1900 տարւայ մնացորդ) 71. 50 լէվ, „Արեւելեան" խ. 17, ղարձեալ 10. 50, ղարձեալ 11. 50, ղարձեալ հին հաշիւէն 13. 50, „Արամեան" խ. (1900 հոկտ. 1-է մինչեւ 1901 յունուար 31) 37. 10, Հեթում Գագիկ 44, ալ. Եչերէն (ամսական 20 ֆր. ոսկի, չորս ամսական) 80 ֆր. ոսկի, Սիմէօն ծերունի 12 լէվ, Ց. Ծ. 16, Գ. Ն. 5, Մ. Գ. 8, Ասպետ 6։ Գումար 247. 10 արծաթ լէվ եւ 80 ոսկի ֆրանք։

Ս. քաղաքէն՝ „Սերոբ" խ. (1900-ի յուլիսէն մինչեւ դեկտ.) 67 լէվ, „Փէղայի" խ. (1900-ի նոյ. եւ դեկտ.) 22, Գ. Գ. 5, Մ. Արծիւ 1900 տարւան համար 5։ Գումար 99 լէվ։

Ռ. քաղաքի „Սերոբ" խ. 35 լէվ։

ՔՈՅԱՃԸՔԻ „Անձնուրաց" խ. 21. 20 լէվ։

Պ. քաղաքէն՝ Մամաճիւղ 100 լէվ, Ռմն 10, Հաճընցի 5, Մարտօ 5, Մանուկ 2։ Գումար 122 լէվ։

Ընդամէնը 524. 30 լէվ եւ 80 ֆրանք ոսկի։

**ՈՍԿԵՅԱՆՔԻ** Կօմիտէն՝

1901 թ. յ ո ւ ն ո ւ ա ր՝ Մահ 40 ղահեկան, Վահրամ եւ Սեպուհ 10. 50-ական, Նորտարի եւ Վեցհարւածեան 20-ական, „Արապօ" խ. 75, „Արաշեանեան" խ. անհատէն 5. 25։ Փ ե տ ր ո ւ ա ր՝ „Սասնոյի" խմբ. (երկու անգամով) 67. 25, „Որոտում" խմբ. 50, „Արապօ" խմբ. 65, Բորենի 11, Վեցհարւածեան, Արեւ եւ Ռմն 20-ական, Աստղ 8. 25։ Մ ա ր տ՝ Մնօ, Զինուոր եւ Վեցհարւածեան 20-ական, Քար (երեք անգամով) 6. 25, „Արապօ" խմբ. 80։ Ա պ ր ի լ՝ Պարոյր, Ծաղիկ եւ Գերեզման 6. 25-ական, „Փայլակ" խմբ. 15. 25, Բորենի 5, Մահ 42, Սեպուհ 11, Քար 2, Վեցհարւածեան 20, „Արապօ" խմբ. 70. 50, Գլխարկ 108, Զինուոր 10, Արարատ 80։ ԱՐՇԱԿԱՒԱՆԷՆ՝ „Անձնազոհ" խ. 60, „Երկիւղած" եւ „Ազատէր" խմբերէն 47. 50, Ծափիւրէն 40։ Մ ա յ ի ս՝ Վեցհարւածեան 20, „Արապօ" խմբ. 70, Գլխարկ 108, Քար 3, „Լեւոնի" խմբ. 108։ Գումար 1427 ղահեկան (ողջ)։

ԱՐՇԱԿԱՒԱՆԷՆ ինպատ Ատրպատականի Կ. Կօմիտէին ստացուած է 210 ղահկ. հետեւեալ անձերից. Մելքիսեդեկ 30 ղահեկան, Փիլիպոս, Շողակաթ, Միասնանի եւ Ծափիւրի փափաք 20-ական, Լուսաւոր, Վահագն, Արշալոյս, Քաջ, Սէր, Առիւծ, Հուր, Հըու եւ Ծիրայր 10-ական, Ծափիւրի Ցոյս 6, Կայծակ, Վռամշապուհ, Հրատ եւ Հայկազուն 5-ական, Ծափիւրի Գեղամ 4, Գալվէրդ 15, Վրդանէս 20։

Ընդհանուր գումար 1672 ղահեկան (ողջ)։

ՎՐԻՊԱԿ.—„Դրօշակ"-ի 1899 թ. № 9-ի Ոսկէհանքի ցանկին մէջ Պահլաւ 10 ղահեկ. ըսւած է. պէտք է ըլլայ՝ Վահրամ 10 ղահեկան։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պուրկազի մէջ „Դաշնակցութեան" կորսուած զէնքերու քննութիւնը բ ո լ ո ր յանցաւորներու և մեղսակիցներու վերաբերմամբ վերջնականապէս փակելէն առաջ՝ կը խնդրուի այն ամէն անձերէն, որոնք ունին ունէ փաստ այդ խնդրի վերաբերեալ, հաղորդեն իրենց գիտցածները կօմիտէիս՝ „Դրօշակի" խմբագրութեան միջոցով։

Կ. ՊՕԼՍԻ ԿԵԴՐ. ԿՕՄԻՏԷ

## ԱԶԴ

Ափրիկեան Տրէպօլիսէն կը խնդրեն յայտարարել, որ բախտախնդրութիւնով պարապող ուրփացի հայ մը, նամականուն գնալով, խեղճ բանտարկեալներուն անունով եկած նամակները կըստանայ, զորս բանալով և նամակին պարունակութեան տեղեկանալով, բուն տիրոջ անունով կը պատասխանէ անոր ծնողաց կամ բարեկամներուն և անոնցմէ փող կը կորզէ։ Քանի մը խարդախութիւնները ճանչցուած են։ Անոնք, որոնք բանտարկեալներ ունին այդ կողմերը, լաւ ուշադրութիւն ընեն իրենց մարդոց գրին և չխաբուին այդ նոր տիպի խաչագողէն։